ԷՋՄԻԱԾԻՆ

1989

Ա.

АЗС146

ԽԶ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1989



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Փոթորկուն տարի, շարժմունքի տարի 3
Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի Սուրբ Ծննդեան քարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3
Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի խոսքը Երևանի հեռուստացույցից 9
Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի խօսքը Մայր տաճարում՝ երկրաշարժի զոհերի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնին . . . 11
Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 15
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 18
ԱԲՐԱՀԱՄ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ—Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայաստանի երկրաշարժից տուժած շրջաններ 19
Տեղեկատուություն 28
Հաղորդագրություն 30
Հայ կաթողիկե Եկեղեցու Հովհաննես-Պետրոս ԺԷ կաթողիկոս-Պատրիարքը Մայր Աթոռում 31
ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական ոեմ. լուրեր 32
Իրաքի հայոց առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանի քարոզը Մայր տաճարում 34
Անսովոր, տխուր Նոր տարի։ Հատվածներ Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան մատեան»-ից 36
Քահանայական ձեռնադրություն Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում . . . 41
Քահանայական ձեռնադրություն իրաքահայ թեմէն ներս 42
Ֆիլարետ միտրոպոլիտի այցելությունը Գամասկոսի Հայոց Առաջնորդարան . . 45
ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ—Հավերժ երախտավորին 47
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ—Ադրբեջանական ՍՍՀ Թուզի շրջանի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները 51
Հանգիստ Տ. Արամ վարդապետ Բոյաջյանի 56
Հանգիստ Տ. Նորայր ավագ քահանա Սարգսյանի 58
Հանգիստ Տ. Գրիգոր քահանա Ծատուրյանի 59
Հանգիստ Տ. Սամվել քահանա Համբարձյանի 60
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 62
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine». Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 01.03.1989 թ.: Ստորագրված է տպագրության 11.04.1989 թ.:
Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 393
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1989 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



ՓՈԹՈՐԿՈՒՆ ՏԱՐԻ, ՇԱՐԺՄՈՒՆՔԻ ՏԱՐԻ

«Այն ժամանակ է լինում հարկավոր բժշկությունը սրբազան ձեռքիդ, երբ բոլորովին տեղի է տալիս կենդանությունը Մարդու էության բոլոր մասերում»:

ՆԱՐԵԿԱՑԻ

(թրգմ. Վ. Գևորգյանի)

Վերջապես վերջացավ 1988 թվականը, այս ձիգ ու երկար տարին, այս բուռն ու ոգեշնչող, բայց և տագնապալի ու աղետաբեր տարին:

1987 թվականի դեկտեմբերը սովորական էր. խաղաղ աշխատանք, առօրյա հոգսեր և մեծ, շատ մեծ հույսեր, որ մեր կյանքում կբարեշրջվի ամեն բան, որ 1988 թվականը համաշխարհային անդորրի ու խաղաղության մեջ մեր ժողովրդին կբերի նորանոր հաջողություններ:

1988 թվականը է՛ր նաև Նորին Սուրբ Օծություն Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նվիրյալ կյանքի ութսուներորդ տարին: Տարին խոստանում էր հոբելյանական լինել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռի համար, մեկ անգամ ևս անդրադառնալու Նորին Սրբության կյանքին ու գործունեությանն: Վեհափառ Հայրապետի գիտակցական ողջ կյանքը հագեցած է բոլորանվեր ընծայաբերումով: Ութսուն տարիների գերխիտ մի կյանք՝ սեփական ժողովրդի գալիքի տեսիլքին նվիրված:

Այդ տարիները բեղմնավորվեցին եկեղեցաշինությամբ Մայր Աթոռում և Հայաստանի տարբեր շրջաններում:

Այդ տարիները բեղմնավորվեցին եկեղեցական դասի սերունդներով ու նորանոր եկեղեցիների բացումով:

Այդ տարիները բեղմնավորվեցին Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումով:

Այդ տարիները բեղմնավորվեցին Հայաստանյայց Եկեղեցու գործուն մասնակցությամբ միջեկեղեցական էկումենիկ կյանքին, որով և աննախադեպ չափերով բարձրացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջազգային հեղինակությունը: Այդ տարիները բեղմնավորվեցին համաշխարհային խաղաղության շարժմանը գործարար անդամակցությամբ՝ այն գիտակցությանն հրամայականով, որ խաղաղություն պետք է ողջ աշխարհին, բայց առաջին հերթին անհրաժեշտ է մեր ժողովրդին:

1988 թվականը կոչված էր ի մի բերելու այս բոլորը, որպես Վեհափառ Հայրապետի գործունեության արգասիք, բայց և հիմք հետագա առավել բեղմնավոր գործունեության:

1988 թվականը հոբելյանական էր, բայց եղավ նաև Նորին Սրբության գահակալության ամենատագնապալի տարին, Վեհափառ Հայրապետի հոգեկան լարվածության կիզակետը, որովհետև լարված էր

ինքը տարին: Տարին փոթորկում էր և... աղետաբեր:

*
* *

1988 թվականի փետրվարին փոթորկվեց այն, ինչ հետո անվանվեց Ղարաբաղյան շարժում: Արդեն երեք տարի էր, որ Խորհրդային ընդարձակ ու հզոր երկիրը ապրում էր նոր շնչով, նոր տեսիլքով: Հոգևոր և բարոյական վերածնության տեսիլքը հույս էր ներշնչում վաղվա օրվա նկատմամբ: Համարձակությամբ շոնդալից գանահարվում էին պատմական սխալները, խոստումներ էին տրվում վերացնելու հասարակական անարդարությունները, մեկ խոսքով հասարակությունը դուրս էր եկել ինքնամաքրման ճանապարհ՝ ստեղծելու համար իրավական պետություն՝ արդարության հիմքերի վրա: Ահա պատմական սխալը ուղղված տեսնելու հավատքով և արդարության վերահաստատման վճռականությամբ էր, որ Արցախի հայ բնակչությունը հանդես եկավ Մայր Հայրենիքին վերամիավորվելու պահանջով: Պատմական արդար պահանջ՝ հանուն արդար պատմության և արդարությամբ ամրակապված հասարակության, հանուն արդարակամ և ճշմարտահիմն եղբայրության: Փոթորկվեց Արցախը: Փոթորկվեց Հայաստանը: Փոթորկվեց սահմանադրական միջոցներով, փոթորկվեց հանուն սահմանադրական իրավունքների՝ մարդու և ժողովուրդների ինքնորոշման իրավունքների: Արցախահայությունը ծարավի էր Արդարության լրումին:

Եվ դարերով իր ժողովրդի կողքին կանգնած, վեցհարյուրամյա ապապետականացման մռայլ շրջանում իր ժողովրդի ճակատագրին տեր կանգնած Եկեղեցին հաղորդակցվեց այդ պահանջատիրության: Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը ողբաց Սումգայիթի անմեղ զոհերին, եղավ ողջախոհության կոչող պատգամ և հույսի ջահ, երբեմն հուսալքության մեջ տվայտացող ժողովրդի համար:

*
* *

Բայց հայ ժողովրդին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն 1988 թվականը վերապահել էր ավելի մեծ անակնկալ, աղետալի անակնկալ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը:

Դարեր շարունակ հայկական լեռնաշխարհը տեսել է բազում և բազմապիսի աղետներ, թշնամու ոտքը անպակաս է եղել մեր սար ու ձորից, դաշտ ու անտառից: Սակայն անխիղճ է եղել նաև տարերքը, հարյուրավոր երկրաշարժներ են եղել հայկական բարձրավանդակի տարբեր շրջաններում՝ մեկը մյուսից ահավոր ու աղետալի:

Այդ երկրաշարժները, ցավոք, թողել են և իրենց վկայությունները՝ փառապակ, բայց այսօր գետնամած Զվարթնոց տաճար, մարդաշատ և կենսախիտ, բայց այսօր բուերի կռինչով մահասարսուռ Անի քաղաք, մինչև Սյունյաց լեռների գոհարակն Տաթևի տաճար և այլք: Այդ երկրաշարժները եղել են այնքան հաճախական, որ թվում էր երկիր Հայաստանը պիտի սովոր լիներ դրան և դաս քաղեր դրանից: Ավա՜ղ, սակայն, 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը եղավ անասելիորեն դաժան, անխղճորեն անժամանակ:

Մեր ժողովուրդը վերագտել էր իր հոգեկան եռանդն ու ոգեկան ուժը, իր պետականությամբ և նոր կյանքով ընդվզում էր անգամ ճակատագրի դեմ, բայց երկրաշարժը եկավ, ճակատագրապաշտ դարձրեց մի ողջ ժողովուրդ. այս դարի սկզբից 15 տարի անց նա ապրեց Մեծ Եղեռնի ողբերգությունը, դարի ավարտին մոտ 15 տարի մնացած ցնցվեց ահեղ, մահասփյուռ երկրաշարժի սարսափից:

Բարեբախտաբար, սակայն, մարդկությունը այս անգամ մեզ չլքեց մեր մահվան ու տագնապի մեջ: Առաջին հերթին Խորհրդային Միությունը՝ ժողովուրդների բազմազգ ընտանիքը սատար կանգնեց ու զորավիգ նյութական օգնություններով և եղբայրական բազուկով վերացնելու ավերակներն ու վերականգնելու մեր քաղաքներն ու ավանները: Մեր երկրում տեղի ունեցող արմատական բարեփոխությունների արդյունք էր և շուտափույթ օգնությունը արտաշխարհից:

Բազմաթիվ արտասահմանյան հեռու և մոտ, հարուստ կամ աղքատ երկրներում մեր ժողովրդի նկատմամբ ստեղծված համակրանքի ջերմ մթնոլորտի արդյունքը եղավ այլապես զարմանալի, բայց այժմ իրական, առատաձեռն օգնություն աղետի առաջին պահից առ այսօր, և դեռ՝ հեռուն գնացող ծրագրեր, որոնք եթե իրագործվեն ամբողջովին, ապա նոր հիմք կդառնան մեր ժողովրդի բարօր, վերակենսավորված կյանքի համար:

Հայ Եկեղեցին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի արձագանքեց Ամենայն Հայոց Հայրապետի կոչին և մեկ սիրտ, մեկ հոգի ձեռնամուխ եղավ երկրաշարժի ծանր վերքերի ապաքինումին՝ հոգևոր ամոքման: Եկեղեցին չսպասեց, որ դիմեն իրեն, օգնության խնդրական ձեռք կարկառեն,

այլ առաջին իսկ օրվանից հետևողական աշխատանք տարավ ճեմարանով և միաբանությամբ՝ հոգևոր մխիթարանք և առաջին օգնություն հասցնելու մինչև հեռավոր աղետյալ գյուղերը: Հազարավոր տոննաներով առաջին անհրաժեշտության ապրանքներ ստացվեցին Մայր Աթոռի հաստատությամբ և բաշխվեցին աղետի բոլոր հասցեներով: Ամենայն Հայոց Հայրապետը հընչեցրեց տագնապի զանգը քրիստոնեական աշխարհով մեկ, և Նորին Սրբության կոչերը անպատասխան չմնացին ոչ միայն հայաշխարհում, այլև քույր Եկեղեցիներում, որոնք հավաքեցին հավատացյալների լումաները և ուղարկեցին աղետյալ Հայաստանին Մայր Եկեղեցու միջոցով:

Դարերով ողբ ու տարերք դիմակայած ժողովուրդը զգաց եղբայր ժողովուրդների ու համաշխարհային հասարակության զորակցությունն ու անսակարկ պատրաստակամությունը, ժողովրդի դարերով կուտակված ներուժը ձեռք բերեց առավել ուժականություն, առավել վճռականություն և աներեր հավատք վաղվա օրվա նկատմամբ:

* * *

Ահա այս փոթորկոտ ոգով և աղետահար հոգիով ենք մտնում Նոր տարին: Ամանոր և հույս նոր, կաղանդ և կյանք նոր: Ինչքան հոգեկան ուժ ու եռանդ, բազկի թափ ու մկանների պրկում է պետք մեզ՝ ոտքի վրա հաստատուն կանգնելու համար, ճակատը բաց ու բարձր՝ աշխարհին նայելու, հաստատելու իբրև ազգ ու ժողովուրդ, իբրև պետականություն և մշակույթ, իբրև ոգի և Եկեղեցի մեր գոյությունը:

Մեր ժողովուրդը տոկացել է և՛ բնական աղետներին, և՛ թշնամու հարուցած արհավիրքներին, նույնիսկ հառնել է Եղեռնի մոխիրներից, Սարդարապատով հաստատել իր պետականությունը՝ միշտ իբրև աջակից ու ոգեպնդող ունենալով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որը նաև հետ այսու, ի գլուխ ունենալով Վազգեն Ա 80-ամյա իմաստուն Հայրապետին, զորավիգ կկանգնի իր ժողովրդին տագնապի պահին, կամոքի վիշտը և հույս ու հավատ կներշնչի գալիքի պայծառ օրերի նկատմամբ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 Յունուար 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրեցեալ հաւատացեալ ժողովուրդ Մեր, որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

Վերստին կանգնել ենք աստուածային հրաշալի տնօրինութեան յիշատակի առաջ, որ պատումն է Յիսուսի ծննդեան և աստուածայայտնութեան, պատումը մարդկութեան փրկութեան սկզբնաւորման, որ շեփորեցին հրեշտակները Բեթղեհէմի երկնքի բարձունքներից:

Ղուկաս ավետարանիչը պատմում է. «Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա (հովիւներին) և փառք Տեառն ծագեցին առ նոսա և երկեան երկիւղ մեծ: Եւ ասէ ցնոսա հրեշտակն՝ մի երկնչիք՝ զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, զի եղիցի ամենայն ժողովրդեան: Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի» (Ղուկ. Բ. 9—11):

Իր լրումին էին հասնում Հին Կտակարանի մարգարէութիւնները, մանաւանդ կանխագուշակումը Եսայի մարգարէի, որ իրաւամբ նկատւում է Հին Կտակարանի աւետարանիչը:

Հին աշխարհում ամենուրեք, հոգեկան կապանքների ու մեղքերի բեռան տակ տուայտող մարդկային բազմութիւնները, երազում էին գալուստը մի փրկչի, գալուստը արդարութեան և խաղաղութեան մի աւետողի:

Այդ երազանքը արտայայտել էին նաև հեթանոս մտածողներ, ինչպէս օրինակ՝ հռոմէացի մեծ բանաստեղծ Վիրգիլիոսը, որն իր գործերից մէկում, գրուած Քրիստոսի ծննդից քառասուն տարիներ առաջ, տեսիլքը ունի, թէ երկնքից պիտի իջնի մի մանուկ, որը վերջ պիտի տայ «երկաթէ դար»-ին

«ԱՌԱՔԵԼՈՑ ԱՂԱՒՆՈՑ»

ու աշխարհին պիտի բերի մի «ոսկեայ դար», դար առանց զէնքերի, առանց պատերազմների (Բուկոլիկա):

Նաև Օվիդիոս հռոմէացի բանաստեղծը, Քրիստոսի ծննդեան նախորդող օրերին, դառնութեամբ հաստատում էր իր ժամանակի «երկաթեայ դար»-ի արհաւիրքները, ասելով՝ «Այժմ գործում են ամէն տեսակ անօրինութիւններ, ամօթը, ճշմարտութիւնը և հաւատքը անյայտացած են, և նրանց տեղը երեում են՝ խարդախութիւնը, սուտը, խորամանկութիւնը, բռնութիւնը և հարստանալու ոճրային ախորժակը... սպառնում է պատերազմը, որ արիւնոտ ձեռքերով բարձրացնում է իր շռնդալից զէնքերը» (Մետամորֆոզ):

Այսպէս է անա, որ ի լրումն ժամանակաց, յայտնուեց մեծ ու սքանչելի հրաշքը, ծնունդը Մեսիայի, ծնունդը սպասուող աշխարհի Փրկչի:

Ինչպէս երկու հազար տարիներ առաջ Բեթղեհէմի բարեպաշտ հովիւներին, նաև այսօր մեզ բոլորիս բերում է նոյն աւետիսը՝ ծնունդը Փրկչին Յիսուսի. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ և մեզ մեծ աւետիս»:

Դուք բոլորդ, հայ առաքելական Եկեղեցու հաւատացեալներ, ընդունողներն էք, կրողներն էք այդ մեծ ու սքանչելի աւետիսի: Սակայն ուշադիր լինենք, որ չդառնանք այդ աւետիսը լոկ ստացողներ, կամ լոկ խօսքով խոստովանողներ, այլ մանաւանդ լինենք Քրիստոսի աւետած պատգամները իրագործողներ, կեանքի կոչողներ՝ մեր ամենօրեայ կեանքում, մեր հասարակական գործունէութեան մէջ, մեր աշխատանքի վայրում:

Յիսուսի ծննդով համայն աշխարհին աւետուած մեծագոյն պատգամն է՝ խաղաղութեան և բարի կամեցողութեան հաստատումը մարդկանց սրտերում և մարդկային հաւաքականութիւնների ու ազգութիւնների միջև:

Մեր օրերին էլ տակաւին, մարդկային աշխարհը շատ վայրերում տառապում է խաղաղութեան ու բարի կամեցողութեան պակասից, որի հետեւանքներն են բազում տեսակի՝ անարդարութիւններ, հալածանքներ, շահագործումներ, աղքատութիւն, սով, ազգամիջեան թշնամանքներ, արիւնալի պատերազմներ և անաւոր սպառնալիքը աշխարհը կործանելու ատոմական կոյր ուժերի սանձազերծումով:

Այս իրավիճակում, ինչքա՜ն մխիթարական է և յուսադրիչ բոլորիս համար, Նոր Տարուայ սեմին ողջունել աւետիսը Քրիստոսի ծննդեան, աւետիսը խաղաղութեան իշխանի յայտնութեան, աւետիսը արդարութեան արեգակի ծագման:

Արդ, ցնծութեամբ դիմաւորենք աւետումը Քրիստոսի ծննդեան. իբրև գերագոյն բարի լուր, որ կոչուած է մարդկային կեանքի երկնքի տակ ստեղծելու մի խաղաղ մթնոլորտ, բերելու մի բարի շունչ մարդկանց և ազգութիւններին, շունչ համերաշխութեան, իրար հասկացողութեան, փոխադարձ ներողամտութեան, եղբայրական սիրոյ և գործակցութեան, յիրականացումն մարդասիրական, շինարար, բարի նպատակների, որոնց անհուն ծարաւը ունի մերօրեայ աշխարհը համայն:

Քրիստոսի հրաշալի ծնունդը, հոչակումն է հաշտութեան՝ Աստուծոյ և նրա որդիների միջև և հոչակումը՝ մարդկանց ու ժողովուրդների եղբայրութեան:

Սիրելիներ, անցնող տարին մեր ազգի համար եղաւ տագնապներով լի, ցաւատանջ ապրումների մի տարի, մանաւանդ իբրև հետևանք 7 դեկտեմբերի երկրաշարժի, որը կործանեց Շիրակի և Լոռու մեր շէն քաղաքները և գիւղերը, իղելով կեանքը տասնեակ հազար մեր ազգակիցների:

Ծանր սգի և ողբի հոգեկան մթնոլորտի մէջ են գտնուում մեր ժողովրդի զաւակները թէ Հայաստանում, թէ Արցախում և թէ հայ սփիւռքի տարածքի վրա: Այս ողբերգական օրերին, մանաւանդ մենք՝ քրիստոնեաներս, լաւատեսութեամբ պէտք է դիմաւորենք աւետիսը Քրիստոսի ծննդեան. որ լինելով խաղաղութեան իշխան, եղաւ նաև արդարութեան արեգակ բոլոր նրանց համար, որոնք ծարաւի են արդարութեան: «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին» (Մատթ. Ե. 4):

Այսպիսի սպասումների օրերին, եկէք աղօթենք, որ մեր ժողովրդի զաւակները, բոլորը անխտիր, ամրապնդեն իրենց ներքին համազգային համերաշխութիւնը, միասնութիւնը հայրենի պետութեան և հայրենի ժողովրդի ու սփիւռքի մեր զաւակների միջև, յստակ գիտակցութեամբը անցեալում մեր ազգի անհաւոր փորձառութեանց, յստակ գիտակցութեամբը աշխարհագրական այս տարածքի վրայ ապագայ մեր ազգային գոյատևման հրամայականի: Մեր մայր հայրենիքի ու ազգի առաջ դրուած բոլոր տեսակի հարցերի հնարաւոր լուծումը, ներառեալ Արցախեան դատի արդար կարգաւորումը, պայմանաւորուած է այդ հրամայականի իրագործումով:

Տագնապի օրերին մանաւանդ, ժողովուրդները պէտք է ապացոյցը տան իրենց ազգային գերագոյն շահերի գիտակցութեան և իրենց մտածումների ու զգացումների կարգապահութեան:

Այսօր մենք՝ հայերս, կանգնած երեք հազար ու աւելի տարիների մեր ազգային պատմութեան և յիշատակութեան արժանի բազում իրագործումների հորիզոնի առաջ, մեր հայեացքը յառած դէպի ապագան, պարտաւոր ենք մնալ լաւատես ու ինքնավստահ, եղբայրական ազգութիւնների մեծ ընտանիքում՝ ազատօրէն շարունակելու և իրականացնելու մեր ազգի ազգիւ բաղձանքները, հայրենակերտ ծրագրերը, եկեղեցաշէն առաքելութիւնը, առանց տկարանալու, առանց կորցնելու մեր հաւասարակշռութիւնը, առանց զլանալու մեր աշխատանքի բաժինը, առանց նուազեցնելու մեր մայր երկրի ազգաբնակչութեան համրանքը, ամէն հնարաւոր ճանապարհներով առաւել աճեցնելու, զօրացնելու հայրենաբնակ մեր ժողովուրդը և առաւել շէնացնելու ու ծաղկուն դարձնելու ողջ տարածքը մեր հայրենի աշխարհի, քաղաքներում և գիւղերում:

Այո, մենք՝ հայերս, այստեղ անշարժ կանգնած, այս սրբազան հողի վրայ, հաւերժական Արարատի նայուածքի տակ, ոգեշնչուած մեր բազմադարեան պատմութեան հերոսական սխրանքների յիշատակով, յենուած մեր հոգևոր ու մշակութային անկորնչելի ժառանգութեանց, յենուած մեր վերաշինուած արդի Հայաստանի՝ ապրող, շնչող իրականութեանը, պէտք է ապրենք ու պիտի ապրենք միակամ և միախորհուրդ, նոր խօսք ասելու սրբազան կրքով գալիք ժամանակներին, զի մեր ազգի ծոցից պիտի ծնուեն նոր Վարուժաններ ու Սիամանթօներ, նոր Թումանեաններ ու Չարենցներ, նոր Սարեաններ ու Խաչատրեաններ, նոր Անդրանիկներ ու Բաղրամեաններ:

Եւ ով իմանա, գուցէ հենց այս օրերին ծնուում են նրանք, շուտով՝ նոր լոյս, նոր փառք բերելու հայոց աշխարհին:

Ամենողորմ Աստուած հարցն մերոց, թող Քո Միածին Որդու Սուրբ ծննդեամբ շնորհներով առաւել պայծառանայ, առաւել ճառագայթի հանճարը հայկեան:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ բոլորիդ, բոլորիդ մեծ աւետիս: Ամէն:



Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԻՑ

(9 դեկտեմբեր 1988 թ.)

Սգակիր ժողովուրդ,

Ծանր սգի մեջ է համայն հայ ազգը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Ծանր սգի մեջ է մեր Սուրբ Եկեղեցին և Միածնաէջ Տաճարը Ամենայն Հայոց:

Դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժը քարուքանդ է արել մեծ մասամբ՝ Լենինական, Կիրովական, Ստեփանավան մեր հայրենի շեն քաղաքները և ամբողջապես կործանել Սպիտակ քաղաքն ու մոտակա գյուղերը:

Ողբում ենք բազում տասնյակ հազար մեռյալների, նույնքան վիրավորների ու ավելի քան հարյուր հազար անօթևան ժողովրդի համար:

Աշխարհը պատմության ընթացքում քիչ անգամներ է արձանագրել նման արհավիրքներ:

Մի ժողովրդի, որ ապրել էր զոլումը 1915-ի ցեղասպանության, մի ժողովրդի, որ այս տարեսկզբից վերստին կանգնել էր դաժան ճակատագրի առաջ արցախյան տառապանքով ու սումգայիթյան ողբերգությամբ, մի ժողովրդի, որ վերջին շաբաթներին տասնյակ հազարավոր աղետյալ գաղթականների ընդունել էր իր ծոցում, պիտի խնայվեր նոր արհավիրք, նոր կոտորած, նոր տառապանք:

Սաղմոսերգուի նման աղաղակում ենք. «Տեր Աստված, մինչև ե՞րբ պիտի մոռանաս մեզ, մինչև ե՞րբ քո երեսը պիտի դարձնես մեզանից: Աստված մեր, նայի՛ր մեզ և լսի՛ր մեզ»:

Եվ այս ամենը, ով Տեր, մեր ո՞ր մեղքի համար:

Բայց գուցե բոլոր մեր տառապանքների և ողբերգությունների մեջ մի գաղտնի խորհուրդ կա թաքնված, փրկության մի անհայտ արահետ: Թող լինի՝ կամք Տյառն:

Այս կիրակի օր, Մայր տաճարում, Մենք պիտի կատարենք հանդիսավոր հոգեհանգստյան արարողություն և պիտի աղոթենք բազմահազար զոհյալների հոգիների համար:

Հայրազատներ Մեր,

Աղոթքից ու ողբից հետո, մեր դեմքերը դարձնենք դեպի մեր տագնապահար ժողովուրդը և դեպի մեր կործանված քաղաքները, այո, վշտաբեկ սրտով, սակայն ո՛չ հուսահատ և ո՛չ պարտված: Լույս հավատքով, անխորտակ ոգով, հուժկու բազուկներով, քաջությամբ դիմավորենք մեր ճակատագիրը, արիաբար տոկանք ամեն փորձությանց ու մի անգամ ևս հաղթությամբ պսակենք լույս մյուռոնով օծյալ ճակատը մեր ազգի:

Այսպիսի պահերին է, որ ժողովուրդները կարող են ցույց տալ իրենց առաքինի նկարագիրը, իրենց զոհաբերության ուժը, իրենց իրավ հայրենասիրությունը:

Այս պահին Մենք մխիթարված ենք ու երախտապարտ, որ սովետական կենտրոնական կառավարությունը իր ամեն միջոցներով և մեր եղբայր ազգությունները բոլորը, հոգատար սրտով մեր Հանրապետության կողքին են կանգնած ու օգնության են հասնում մեր տառապյալ ազգին:

Մենք հրավեր ենք կարդում ձեզ բոլորիդ մնալ անշարժ ձեր ինքնավստահության ու լավատեսության ժայռի վրա, ամեն մեկդ պատրաստ ձեր զոհողության բաժինը բերելու ձեր աղետյալ քույրերին ու եղբայրներին:

Մենք նույն հրավերը, նույն կոչը ուղղել ենք այս օրերին նաև սփյուռքի հայ եկեղեցիներին ու ժողովրդին, նույն ոգեշնչումով, նույն սպասումներով: Վկայում ենք, թե արտասահմանի մեր ազգակիցները արդեն գործի են անցել, իրենց եղբայրական օգնության ձեռքը երկարելու տուժածներին ու քանդված քաղաքներին, այն անսասան հավատքով, որ ինչպես մեր անցյալում հաճախ, նաև այս անգամ «ձախորդ օրերը կու գան ու կերթան»:

Շուտով կբուժվեն մեր ժողովրդի վերքերը, և մոտ ապագայում մեր կործանված քաղաքները կվերակառուցվեն ու դեպի երկինք կխոյանան առավել շքեղ, առավել լուսադեմ:

Նորից կհնչեն այնտեղ հայ երգն ու խոսքը, նորից կգնգան մուրճի հարվածները հայ բանվորների, նորից կծնվեն երեխաները մեր հազարհազարով:

Լացի ու սգի այս ծանր ժամին, սիրտ առեք, հայեր, հոգով եռացեք, միմյանց մխիթարեցեք սիրով միաբան, նոր լուսաբացի արդար տեսիլքով, ձեր հայացքը հառած մեր գոյատևման ու հավերժության գերագույն խորհուրդ լեռանց լեռ Արարատին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեա՛ ի Տեառնէ և ի Մէնջ». Ամեն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԻՆ

(15 Յունուար 1989 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:
«Ոյք վարէին արտասուօք, ցնծութեամբ հնձեսցեն»:
«Ովքեր արտասուքով են սերմանում, նրանք ցնծութեամբ պիտի հնձեն»:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ,

Այս խօսքերը գրի է առել աստուածային ներշնչումով մեծ սաղմոսերգուն՝ Դաւիթ մարգարէն, սրանից չորս հազար տարիներ առաջ: Մարդկային ճակատագրի խորհուրդներից մէկն է այս, դարեր շարունակ: Յաճախ մարդիկ և ժողովուրդներ արտասուքով են սերմանում, բայց կը գայ օրը, երբ նրանք կը հնձեն ուրախութեամբ: Ողբերգութիւնը կը վերածուի յոյսերի իրականացման, վերածնունդի:

Սգակիր ժողովուրդ, անցան քառասուն օրեր այն ահաւոր օրուանից՝ Դեկտեմբերի 7-ից, երբ մեր ամբողջ երկիրը և համայն հայ ժողովուրդը մեծ հարուած ստացաւ, գրեթէ աննախընթաց, ահագնածաւալ մի երկրաշարժով, որը քարուքանդ արեց բազմաթիւ քաղաքներ և շէն գիւղեր Շիրակի ու Լոռուայ հայոց աշխարհներում: Պատմութեան մէջ քիչ անգամներ են յիշւում նման սաստիկ երկրաշարժներ, որոնք այլապէս բնական օրէնքների համաձայն բացատրութիւններ ունեն, երկրագնդի ներքին շերտաւորումների ու շարժումների հետ կապուած, և որոնք դժբախտաբար կրկնւում են ժամանակի ընթացքում, մանաւանդ աշխարհագրական այն շրջաններում, որոնք երկրաբանական կառուցուածքով ենթակայ են երկրաշարժների, ինչպիսին է հենց մեր աշխարհը, ամբողջ Անդրկովկասը, մինչև Արեւելք: Բայց այս անգամ մեր ճակատագիրը ահարկու եղաւ, որովհետև աննախընթաց էր այս երկրաշարժի սաստկութիւնը, որի հետևանքով, ինչպէս գիտէք, աւելի քան քսանհինգ հազար մեռեալներ ու հազարաւոր վիրաւոր-

ներ եղան և մօտ կէս միլիոն բնակիչներ մնացին անտուն: Եւ, աւա՜ղ, մահացածների մէջ մեծ է թիւը մանաւանդ երեխաների ու պատանիների: Համայն մեր ազգը սգի մէջ է և՛ Հայաստանում, և՛ Սովետական Միութեան միւս հանրապետութիւններում, որտեղ մեծ թուով հայեր են ապրում, և՛ արտասահմանում հայ սփիւռքում: Այսօր չկայ հայ մարդ աշխարհի վրայ, ուր էլ նա բնակուելիս լինի, որ վշտակից չլինի Հայաստանի ժողովրդին: Ձեզանից ամէն մէկը ամէն օր ապրում է այս ողբերգական իրավիճակը: Գուցէ ձեզանից շատերը անձամբ կարողացան այցելել աղէտեալ շրջանները, ինչպէս ես Դեկտեմբերի 11-ին գնացի Լենինական և իմ աչքով տեսայ ահաւոր իրականութիւնը: Եւ մտադիր եմ առաջիկայ շաբաթուայ ընթացքում վերստին այցելել աղէտեալ վայրերը:

Այսօր, համաձայն մեր եկեղեցական աւանդական կարգի, մենք հաւաքուած ենք կրկին աղօթելու զոհուածների հոգիների համար, հանդիսաւոր հոգեհանգստեան արարողութեամբ: Հոգեհանգստեան արարողութիւններ են կատարւում այսօր Հայաստանի բոլոր եկեղեցիներում, նաև Լենինականում ու Սպիտակում, ուր մենք հոգևորականներ ուղարկեցինք այստեղից որպէսզի Սպիտակ քաղաքի աւերակների վրայ իսկ հոգեհանգստեան պաշտօն կատարուի: Նաև արտասահմանում Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր աղօթքի Տներից աղերս պիտի բարձրանայ առ Աստուած, որպէսզի Տէրը քաղցրութեամբ ընդունի հոգիները բոլոր զոհուածների և արժանի անի նրանց երկնային արքայութեանն ու յաւիտենական կեանքին:

Անկասկած նրանց յիշատակը անմոռաց կը մնայ մեր բոլորի մէջ: Այս հոգեհանգստով չի վերջանում մեր սուգը: Մեր սուգը, մեր վիշտը պիտի շարունակուի երկար տարիներ, և նրանց յիշատակը հաւանաբար պիտի անմահացուի մի յատուկ յուշարձանով՝ կառուցուած այնտեղ, աղէտեալ շրջաններում, որպէսզի գալիք սերունդները միշտ յիշեն մեր օրերի մեծ Եղեռնը:

Սիրելի ժողովուրդ, աղօթքից յետոյ երևի մեր ուշադրութիւնը պէտք է դարձնենք դէպի մեր ապագան, որպէսզի հնարաւոր չափով արագ բուժուեն մեր ազգի խոր վէրքերը, և սկսուի վերաշինութիւնը քանդուած, աւերուած քաղաքների ու գիւղերի: Ինչպէս գիտէք, բացի չորս քաղաքներից, քանդուած են նաև 58 հայկական գիւղեր ամբողջապէս կամ մասամբ: Այս օրերին հսկայ աշխատանք է կատարւում այդ շրջաններում, որպէսզի փլատակները հեռացուեն, ճանապարհները բացուեն, շէնքերը, որոնք վթարի են ենթարկուել՝ փլցուեն, ու գարնանը սկսուեն վերաշինութեան աշխատանքները: Հսկայական միջոցների կարիք կայ, նաև մեքենայական սարքաւորումների, որպէսզի առաջիկայ երեք տարիների ընթացքում վերաշինուեն այդ քաղաքներն ու գիւղերը:

Մենք մխիթարուած ու երախտապարտ ենք անշուշտ, որ այս վիթխարի աշխատանքի իրականացման համար լայն միջոցներով մեզ օգնութեան ձեռք են երկարել եղբայրական ժողովուրդները և Խորհրդային կառավարութեան կենտրոնական մարմինները: Ինչպէս գիտէք, մինչև 10 միլիարդ ռուպլու պիտճէ է յատկացուելու կենտրոնական կառավարութեան կողմից, և ամէն տեսակի մեքենաներ՝ վերաշինութեան գործը յաջողութեամբ պսակելու համար:

Վերջին մէկ ամսուայ ընթացքում մեծ չափերով աշխատանք է ծաւալուել աղէտի ենթարկուած քաղաքներում ու գիւղերում: Հայ բանուորների և մեր բանակային ուժերի կողքին, սքանչելի անձնազոհութեամբ, 10—20°

սառնամանիքի պայմաններում աշխատում են աւելի քան քսան հազար կամաւոր որակեալ բանուորներ իրենց մեքենայական սարքաւորումներով՝ ժամանած Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից, Մոլտաւիայից և այլ հանրապետութիւններից: Երեակայեցէք, Լենինականը գրեթէ արդէն մաքրուել է հազարաւոր քանդուած շէնքերի փլատակների կոյտերից:

Ինչպէ՞ս չգնահատել այս հսկայ աշխատանքը և երախտապարտ չլինել այդ հայասէր եղբայր ազգերի զաւակներին:

Նաև արտասահմանից, որոշ պետութիւնների կողմից, խոստումներ կան, որ իրենց մասնակցութեան բաժինը բերեն վերաշինութեան գործին: Խոստումներ կան Իտալիայից, Միացեալ Նահանգներից, Ֆրանսիայից, Անգլիայից ու հետագայում գուցէ խոստումներ լինեն նաև այլ պետութիւններից: Ինչպէս գիտէք, պէտք է վերակառուցուեն հարիւրաւոր դպրոցներ, հիւանդանոցներ, տասնեակ հազարաւոր բնակելի շէնքեր և հասարակական շինութիւններ ու բազմահարիւր գործարաններ: Այս օրերին բոլորս զգում ենք և մխիթարւում, որ մեզ հետ են ոչ միայն Խորհրդային Միութեան եղբայր ժողովուրդները, այլև համարեա ամբողջ աշխարհը:

Ես ջերմ շնորհակալութիւն պէտք է յայտնեմ նաև արտասահմանեան բազում պետական իշխանութեանց՝ նրանց մարդասիրական վերաբերմունքի և կատարած օգնութիւնների համար: Այստեղ չեմ կարող երախտագիտութեամբ չյիշել քրիստոնէական քոյր Եկեղեցիների վերաբերմունքն ու անմիջական օգնութիւնները՝ Ֆրանսիայից, Իտալիայից, Միացեալ Նահանգներից, Արևելեան և Արևմտեան Գերմանիաներից ու Լեհաստանից, Զուիցերիայից, Աւստրիայից, Սիրիայից, կրօնական «Գարիդաս» կազմակերպութեան տարբեր կենտրոններից ու Ժնևի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից:

Իմ օրհնութիւնը բոլորին:

Սիրելի ժողովուրդ, արտասահմանի հայերը ևս տոգորուած են նոյն զգացմունքներով, իբրև մեր հարազատ եղբայրներն ու քոյրերը: Գրեթէ ամէն տեղ ծրագրեր են մշակւում վերաշինութեան գործին մասնակցելու իրենց հնարաւորութեանց չափով: Երևի մի քանի ամիս անց յայտնի կը լինի, թէ արտասահմանի հայութիւնը ինչ չափով կը կարողանայ իր օգնութեան բաժինը մատուցել: Մէկ բան սակայն այսօրուանից կարող եմ ձեզ ի գիտութիւն յայտնել, որ ամերիկահայերը՝ Գանատայից, Միացեալ Նահանգներից, Պրազիլիայից և Արկենթինայից, որտեղ ապրում են մօտ մէկ միլիոն հայեր, պատրաստ են օգնութեան ձեռք երկարելու: Այդ նպատակով ինքս պիտի գնամ մի երկու շաբաթ յետոյ Ամերիկա՝ Նիւ-Եորք, որտեղ հրաւիրուած են այդ երկրների հայ համայնքների ներկայացուցիչները՝ հոգևորականներ և աշխարհականներ, որպէսզի իմ օրհնութիւնը տանեմ Սուրբ Էջմիածնից և մայր հայրենիքից, ու սկիզբը դրուի այն կազմակերպութեան, որը պիտի ստանձնի որոշ շինարարական իրագործումներ Ստեփանաւան քաղաքում: Իմ վերադարձից յետոյ յայտնի կը դառնայ, թէ ինչ չափերի պիտի հասնի այդ օգնութիւնը, սակայն ես վստահ եմ, թէ ամերիկահայ ժողովուրդը իր առաւելագոյնը պիտի իրականացնի, որպէսզի պատուով կատարի իր հայրենաշէն պարտականութիւնը: Այդ առիթով ես հրաւիրել եմ նաև Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ Կաթողիկոսին, որը երեք շաբաթ առաջ այստեղ էր, որպէսզի Նիւ-Եորք քաղաքում միասին լինենք և միատեղ հովանաւորենք Ստեփանաւան քաղաքի վերաշինութեան գործի սկզբնաւորումը:

Ահա այս յոյսերով, ապագայի այս հեռանկարներով, թէև վշտահար սրտով, թէ սգաւոր, բայց նաև ոգևորուած ապագայի այս ծրագրերով, պիտի մեկնենք դէպի Ամերիկա:

Այս շրջանին, սիրելի հաւատացեալներ, մեզանից նախ պահանջւում է չմոռանալ յիշատակը մեր զոհուածների: Մեծ վիշտը մեր սրտերում ծրարած, համակուենք մէկս միւսի հանդէպ սիրով, եղբայրական գուրգուրանքով, մոռացութեան տանք ամէն ուրիշ հարցեր, դառնանք մէկ ու անբաժան Եկեղեցի, մէկ ու անբաժան ժողովուրդ՝ մէկ մայր հայրենիքով, մեր հայրենի ղեկավարներին հաւատարիմ ու նեցուկ, որոնք նոյնպէս տոգորուած են մեր բոլորիս զգացումներով և նուիրուած՝ մեր քանդուած քաղաքներն ու գիւղերը վերակառուցելու մեծ ծրագրերի կենսագործմանը: Ես օրհնում եմ այս միասնութիւնը՝ միասնութիւնը հայ ժողովրդի, հայրենի կառավարութեան և արտասահմանի հայութեան: Այսպիսով է, որ պիտի կարողանանք դիմագրաւել բոլոր դժուարութիւնները, որոնք դեռևս կան մեր առջև մինչև իրականացումը վերաշինութեան ծրագրերի:

Սիրելի ժողովուրդ, թոյլ տուէք, որ յայտնեմ մի բաղձանք ևս՝ ուղղեալ մանաւանդ մայրերին, բաղձանք՝ աճեցնելու թիւը մեր ժողովրդի մայր հայրենիքում: Հրաւէր եմ կարդում, որ ամէն հայ մայր այսօր ուխտ կատարի յաւելեալ մի երեխայ ծնելու, որպէսզի մէկ երկու տարուայ ընթացքում մեր երկիրը ունենայ յաւելեալ յիսուն հազար ծնունդներ: Ահա սրբազան մի պարտականութիւն, որի համար ես իմ օրհնութիւնն եմ տալիս և իմ կոչը ուղղում բոլոր հայ ընտանիքներին, բոլոր հայ մայրերին: Մեր ազգը անցեալում էլ շատ անգամներ կոտորուել է և նոյնիսկ աւելի մեծ չափերով, ինչպէս 1915-ի մեծ Եղեռնի ժամանակ, երբ մենք կորցրեցինք մօտ երկու միլիոն ժողովուրդ, մեր ազգի կէսը, և սակայն մեր սգաւոր ազգը իր հաւասարակշռութիւնը չկորցրեց, շուտով հաւաքեց իր ուժերը ու նոր վերածննդի դռները բացեց մեր նոր հայրենիքի կազմաւորումով, մայր Հայաստանի վերակառուցումով, վերազարթօնքով՝ 1918-ի Սարդարապատի յաղթանակից յետոյ: Այսօր մենք նոյն ժողովուրդն ենք: Աշխարհում շուրջ եօթը միլիոն հայեր են ապրում, որոնցից երեք միլիոն և աւելին՝ Հայաստանում: Այսպիսի ժողովուրդ չի կարող իր յոյսը կորցնել, չի կարող տկարանալ, չի կարող իր հաւասարակշռութիւնը կորցնել, չի կարող չդիմել դէպի նոր լուսաւոր ապագայ: Մեր բոլոր յոյսերի իրականացումը կախուած է մեզանից, կախուած է հայ ժողովրդից, ձեզանից ամէն մէկից:

Այս ուխտով, այս երազանքներով, այս լաւատեսութեամբ, վերածննդի այս տեսիլքով հրաւիրում եմ ձեզ այժմ աղօթել մեր զոհերի արդար հոգիների համար: Թող Աստուած քաղցրութեամբ ընդունի նրանց հոգիները և արժանի անի երկնից յաւերժական լոյսին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:



ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի Ուղղափառ Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կաուիրե),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՄԵՐԿՈՐԻՈՍԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),



Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և Համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե),
Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
Գոկտ. ՀԵՐՄԱՆ ԳՐՈԵՐԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԳՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԳԵԿՈՒՐՏԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱՅԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնական Կոնֆրանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար
դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտի ընդհանուր քարտուղար Հայր
ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա).

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Մեր Փրկչի՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով ողջունում ենք Ձեզ և բերում Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքները Ձեզ, աղոթքով ջերմագին, որ միշտ պայծառ ու ծաղկյալ մնա ձեր պատմական մեծ Եկեղեցին, և Աստված միշտ պահապան ու զորավիգ լինի ձեր հոգևոր դասին և համայն ձեր հավատացյալ ժողովրդին:

Մեր աղոթքն է, որ Քրիստոսի Սուրբ Ծննդյամբ ավետված երկնառաք պատգամները լսելի դառնան մեր օրերի աշխարհին, ժողովուրդներին ու պետությանց ղեկավարներին, որպեսզի մարդկությանը խնայվի կործանարար արհավիրքը պատերազմների, և մարդիկ ու ազգություններ համերաշխ կերպով գտնեն փրկարար նավահանգիստը խաղաղության:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Մեր Փրկչի՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսով ողջունում ենք Ձեզ և Փրկչի Իշման Սուրբ Սեղանից բերում Մեր սրտից բխած ամենաբարի մաղթանքները Ձեզ, պատմական սուրբ Աթոռիդ հոգևոր դասին և համայն մեր հավատացյալ զավակներին, աղոթքով ջերմագին, որ միշտ պայծառ, լուսառատ մնան սուրբ Աթոռիդ աղոթքի Տուները և միշտ նրանց Սուրբ Սեղաններից բարեպաշտ ժողովրդին բաշխվեն շնորհները Սուրբ Հոգու:

Մեր աղոթքն է, որ Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետված երկնառաք պատգամները լսելի դառնան մեր օրերի աշխարհին, ժոլովուրդներին ու պետությանց ղեկավարներին, որպեսզի մարդկությանը խնայվի կործանարար արհավիրքը պատերազմների, և մարդիկ ու ազգություններ համերաշխ կերպով գտնեն փրկարար նավահանգիստը խաղաղության:

Աղոթենք նաև մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքի խաղաղության ու մեր բազմաչարչար ազգի արդար սպասումների իրագործման համար:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Ամեն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՏՈՒԺԱԾ ՇՐՋԱՆՆԵՐ

Սույն թվականի հունվարի 26-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը այցելեց 1988 թվականի դեկտեմբերի 7-ին երկրաշարժից տուժած Հյուսիսային Հայաստանի մի քանի շրջաններ: Այս առթիվ Նորին Սրբությանը ուղեկցում էին Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը, Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանը, Մայր Աթոռի միաբան Տ. Աբրահամ աբեղա Մկրտչյանը՝ որպես գավազանակիր, իրաքահայ ազգային-հասարակական գործիչ պրն. Հասրաթ Միքայելյանը, «Մարմարա» թերթի խմբագիր պրն. Գևորգ Հակոբյանը և սփյուռքահայ հասարակական այլ ծանոթ դեմքեր:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ստեփան Վարդանյանն ու տեղակալներ պրն. պրն. Ռ. Զարգարյանն ու Լ. Սուջյանը:

Վաղ առավոտյան Հայոց Հայրապետն իր ուղեկիցներով ճանապարհվեց դեպի Հյուսիսային Հայաստան, որ այս օրերին դարձել է ողբի ու որբի հայրենիք:

Ճանապարհն անցնում էր ձյունածածկ Արագած լեռան մոտով: Հեռվից աստիճանաբար սկսվում էին երևալ կիսավեր տներ ու շինություններ, ապա և ամբողջովին փլատակների վերածված գյուղեր և ավաններ: Վրանների տակ պատսպարված տնավեր բնակիչներ, որոնցից շատերը կորցրել էին իրենց հարազատներին, նկատելով Հայոց Հայրապետին փոխադրող ավտոմեքենան, դուրս էին գալիս փողոց, ոմանք փաթաթված վիրակապերով, տխուր ու արցունքոտ աչքերով և ողջունում էին Նորին Սրբությանը: Երբ մոտենում էր Վեհափառ Հայրապետի ավտոմեքենան, նրանց տառապած հայացքում հույսի մի շող էր երևում, ինչ-որ անորոշ, բայց հաստատ մի վճռականություն, որ անբարբառ երդումի նման կարաձեռ ասում էր. «Մենք կանք, Վեհափառ, մենք կվերաշինենք մեր երկիրը»:



Երկրաշարժից առաջ... Լենինականի Ս. Աստվածածին



(Ցոթվերք) եկեղեցի. գմբեթի վերանորոգում և խաչի օծում

Վեհափառ Հայրապետը նախ այցելեց ամբողջապես ավերված Սպիտակ քաղաք: Ամենուրեք քարակույտեր էին երևում միայն, ճանապարհներին դեռ մնում էին սև դրոշակները:

Ամենայն Հայոց կաթողիկոսը եղավ Սպիտակի շրջանային կոմիտեի կենտրոնում, ուր մանրամասնորեն ծանոթացավ երկրաշարժից սոսկալի տուժած շրջանի վիճակին և քաղաքի ու գյուղերի՝ փլատակներից մաքրման, վերաշինության աշխատանքներին: Այս շրջանում, բացի Սպիտակ քաղաքից, ավերվել են գրեթե բոլոր գյուղերը: Բնակիչների մի մասը զոհ է գնացել տարերային աղետին, իսկ փրկված երեխաներն ու կանայք տեղափոխվել են այլ շրջաններ, ոմանք՝ Հայաստանի սահմաններից դուրս: Տեղում մնացել են միայն տղամարդիկ, որոնք մեծ ոգևորությամբ մասնակցում են քաղաքի ու գյուղերի փլատակներից մաքրման ու վերականգնման աշխատանքներին: Տոկունություն ու հաջողություն մաղթելով կենտրոնի ղեկավարներին, Վեհափառ Հայրապետը դուրս եկավ այնտեղից՝ շրջագայելու քաղաքում:

Կենտրոնի մոտ արդեն հավաքվել ու Վեհափառ Հայրապետին էր սպասում Սպիտակ քաղաքի բնակիչների մի հոծ բազմություն: Երբ Վեհափառն իր ուղեկիցներով մոտեցավ նրանց, բոլորը խորին հարգանքով ու սիրով խմբվեցին Նորին Սրբության շուրջը: Հուզիչ էր պահը: Աշխատելով թաքցնել իր հուզումն ու ապրումները, ալեզարդ Հայրապետը հետևյալ սրտառուչ ու հուսադրող խոսքով դիմեց հավաքված ժողովրդին.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍՊԻՏԱԿՈՒՄ

Իբրև կաթողիկոս, ես պարտք զգացի հենց առաջին օրվանից հետաքրքրվելու մեր հայրենի երկրում տեղի ունեցած տարերային աղետի հետևանքներով: Չորրորդ օրը անձամբ այցելեցի Լենինական, տեսա այնտեղի ծանր վիճակը, ժողովուրդի սուգը և վիշտը: Եկեղեցական գծով մենք մեր կարելին արեցինք, որպեսզի և՛ նյութական, և՛ հոգևոր օգնություն բերենք մեր տառապյալ ժողովուրդին: Ուրախ ենք և մխիթարված, որ Սովետական Միության մեր եղբայրական ժողովուրդները, ինչպես նաև արտասահմանի բազում ժողովուրդներ մեզ վշտակից եղան: Մեր վիշտը բաժանեցին հատկապես արտասահմանի մեր հայ եղբայրներն ու քույրերը: Ամեն տեղ արտասահմանի տարածքի վրա, որտեղ ապրում են հայեր իրենց եկեղեցական, կրթական և մշակութային հաստատություններով, հոգեհանգստյան արարողություններ կատարվեցին զոհվածների հոգիների համար, ամեն տեղ սգահանդեսներ տեղի ունեցան և ամենուր պատրաստակամություն արտահայտվեց կազմակերպված ձևով օգնության ձեռք երկարելու Հայաստանի աղետյալ մեր ժողովուրդին: Այս պահին այստեղ ինձ հետ են արտասահմանից եկած հոգևորական ու աշխարհական ներկայացուցիչներ: Այս օրերին Հայաստան են այցելում արտասահմանի հայկական տարբեր գաղութներից եկած բազմաթիվ հայեր: Մեկ խոսքով՝ համայն հայությունը ձեզ հետ է, ձեր կողքին է և պատրաստ է իր օգնության բաժինը բերելու: Հենց այդ նպատակով ես մի քանի օրից մեկնելու եմ Ամերիկա՝ Նյու Յորք, որտեղ պիտի հավաքվեն ամերիկահայության ներկայացուցիչները, որպեսզի ծրագրեր կազմվեն իրենց օգնության բաժինը բերելու մեր աղետյալ քաղաքներին և գյուղերին: Ես վստահ եմ, որ մեր Եկեղեցին՝ Հայաստան-

յայց Առաքելական Եկեղեցին, որ ինչպես անցյալում միշտ մեր ժողովուրդի հետ ապրել է մեկ սիրտ, մեկ հոգի, թե՛ ուրախության, թե՛ դժբախտությունների պահերին, այնպես էլ այսօր շարունակում է իր պարտքը կատարել՝ զորավիգ կանգնելով և հոգեկան մխիթարություն բաշխելով ձեզ բոլորիդ: Ձեզ կմնա, որ ձեր վիշտը ձեր սրտերում պահած, չկորցնեք ձեր հույսը, չկորցնեք ձեր կորովը, ձեր լավատեսությունը դեպի մեր պայծառ ապագան: Ինչպես աշուղ Ջիվանին է ասել՝ «Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան»: Այս աղետն էլ կանցնի: Ես հույս ունեմ, որ ապագայում վերստին ուսիթը կունենամ գալու ձեզ մոտ՝ տեսնելու սկիզբը մեր Սպիտակ քաղաքի վերաշինության և վերածնունդյանն:

Ահա այս մի քանի խոսքերով ցանկացա ձեր հոգիները մխիթարել և իմ օրհնությունը բերել ձեզ: Մոտ ապագայում Սպիտակ քաղաքի վերաշինության ծրագրերի մեջ նկատի պիտի առնվի նաև կառուցումը մի եկեղեցու, մի աղոթքի Տան, որ ձեզ մխիթարություն պիտի պատճառի:

Մնացեք բարով:

Ապա Վեհափառ Հայրապետն իր ուղեկիցներով շրջագայեց ավերված քաղաքում՝ հաճախ կանգ առնելով և մխիթարական ու գոտեպնդիչ խոսքեր ասելով փողոցներում հավաքված ժողովրդին:

Մեկնելով Սպիտակից՝ Վեհափառ Հայրապետն այնուհետև այցելեց Կիրովական, որտեղ նաև հանդիպեց տեղի քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների հետ, որոնք ծանոթություններ տվեցին երկրաշարժից հետո քաղաքում ստեղծված իրավիճակի ու տարվող աշխատանքների մասին: Ապա Հայոց Հայրապետը եղավ Կիրովականի Ս. Աստվածածին եկեղեցում, ուր կարճ հանգստյան պաշտոն կատարվեց: Նախապես լսած լինելով Նորին Սրբության գալստյան մասին՝ հավատացյալների մի հոծ բազմություն լցվել էր երկրաշարժից ճաքճքված եկեղեցին: Հանգստյան պաշտոնից հետո Վեհափառ Հայրապետը դիմեց եկեղեցում հավաքված ժողովրդին հետևյալ սրտառուչ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի ժողովուրդ, տխուր սրտով Ս. Էջմիածնից եկա ձեր քաղաքը՝ Կիրովական: Անշուշտ, տեղյակ էի այն ողբերգությանը, որը տեղի ունեցավ այս շրջաններում: Ավերիչ երկրաշարժից մի քանի օր հետո եղա Լենինականում և տեսա այդ մեծ քաղաքի ավերածությունները: Այսօր պարտք զգացի այցելելու նաև ձեր քաղաքը, որտեղից քիչ հետո պետք է գնամ Ստեփանավան, որպեսզի կենդանի աչքով տեսնեմ ավերածությունները և մանավանդ հանդիպեմ մեր սգակիր ժողովուրդին: Լավ է, որ ձեզ էլ հանդիպեցի, Կիրովական այս մեծ, գեղեցիկ քաղաքի ներկայացուցիչներիդ: Փառք Աստուծո, մխիթարված եմ, որ ձեր քաղաքը չի տուժել այնքան մեծ չափերով, ինչքան Սպիտակը և Լենինականը, թեև դուք էլ ունեք մարդկային և նյութական կորուստներ, մոտ հինգ հարյուր հոգի, բազմաթիվ վիրավորներ և շատ շենքեր, որոնց զգալի մասը վթարային վիճակի մեջ է և ենթակա է քանդվելու: Հետևաբար բերում եմ իմ վշտակցությունն ու օրհնությունը, նաև իմ քաջալերանքը, որ այս ծանր օրերը քաջությամբ ու ինքնավստահու-

թյամբ անցկացնեք և լավատեսությամբ տրամադրվեք դեպի ձեր մոտավոր ապագան: Որովհետև մենք՝ Հայաստանի հայերս, մենակ և անօգնական մնացած չենք մեր վշտի և մեր այս ավերակների մեջ. մեզ վշտակցում է մեզ հետ են ամբողջական Սովետական Միության եղբայր ժողովուրդները, մեր պետական բարձր իշխանությունները, նաև արտասահմանի շատ ժողովուրդներ և երկրներ: Համարյա ամբողջ աշխարհը սգակից է մեզ և վշտակից մեր ցավերին: Ես գոհունակությունն ունեմ նաև հայտնելու ձեզ, որ արտասահմանի ձեր քույրերը և եղբայրները, սփյուռքի ողջ հայությունը նույնպես ցավակից է մեզ: Քառասուն օր նրանք էլ սուգ են պահել, հոգեհանգստյան արարողություններ են կատարել զոհվածների համար և այժմ կազմակերպվում են, որպեսզի իրենց օգնության բաժինը բերեն վերաշինության, վերանորոգման աշխատանքներին: Սպիտակ քաղաքը ամբողջությամբ չկա, նոր քաղաք պիտի կառուցվի, Լենինականում բազմահազար շենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ քանդված են կամ քանդվելու ենթակա են: Այդ բոլորը վերաշինական վիթխարի աշխատանք է պահանջում և զգալի ժամանակ՝ երեք, չորս, հինգ տարի, գուցե և ավելի: Այստեղ նույնպես շինարարական մեծ ծրագրեր պիտի սկսեն իրագործվել: Մեր կենտրոնական իշխանությունը, ինչպես գիտեք, տրամադրել է հատուկ բյուջե, որ հասնում է 10 միլիարդ ռուբլու: Այս շինարարական լայն ծրագրերի մեջ արտասահմանյան հայությունը ևս ուզում է իր բաժինը բերել: Դա թե՛ նյութական նպաստ կլինի և թե՛ ազգային բարոյական իմաստ կունենա. մի անգամ ևս աշխարհով մեկ ի հայտ կգա ամբողջ հայ ժողովուրդի միասնությունը, եղբայրությունն ու գործակցությունը: Արտասահմանյան հայերը, ուր էլ որ նրանք ապրելիս լինեն, Եվրոպայում, Ամերիկայում թե այլուր, վստահ եղեք, նրանք գրեթե բոլորը սրտով կապված են մեր մայր երկրի հետ: Ամեն ինչ, որ այստեղ կատարվում է՝ լավ, ուրախալի, շինարար գործեր, նրանց մխիթարություն և ուրախություն է պատճառում, և ընդհակառակը, եթե մեր երկրում մի դժբախտություն է պատահում, նրանք էլ ցավակցում են մեզ: Այս անավոր երկրաշարժը, որ աննախընթաց էր, ցնցեց հոգին արտասահմանի ձեր քույրերի և եղբայրների: Ամեն տեղ նրանք պատրաստ են, ինչպես արդեն նշեցի, իրենց կարողության չափով օժանդակելու վերաշինության աշխատանքներին: Հենց այս նպատակով ես հրավեր եմ ստացել Ամերիկայի հայությունից և մի շաբաթ հետո պիտի մեկնեմ Նյու Յորք, որտեղ պիտի հավաքվեն Հյուսիսային և Հարավային Ամերիկայի տարբեր շրջաններում բնակվող հայ եկեղեցական համայնքների, կազմակերպությունների ներկայացուցիչներ, և պիտի կազմվի մի ծրագիր, որով հայտնի պիտի լինի, թե նրանք ինչ չափով և ինչպես պիտի կարողանան իրենց մասնակցությունը բերել ընդհանուր վերաշինության, վերակառուցման աշխատանքներին:

Ահա իմ այս ուղևորության նոխօրյակին ես ցանկացա մի անգամ ևս այցելել երկրաշարժից տուժած շրջանները, կենդանի աչքով տեսնել ավերակները, հանդիպել մեր աղետյալ ժողովուրդին թե՛ Սպիտակում, թե՛ այստեղ և թե՛ Ստեփանավանում, որպեսզի կենդանի տպավորություններով մեկնեմ այնտեղ և ներկայացնեմ իրական պատկերը երկրաշարժից տուժած այն շրջանների:

Սիրելի կիրովականցիներ, Ս. Էջմիածնից բերում եմ բոլորիդ իմ օրհնությունը, իմ բարի մաղթանքները, որ մնաք հաստատ ձեր ինքնության հիմքերի վրա, հայ ժողովուրդի ամուր զգացմունքներով տոգորված, չհու-

սահատվեք, չտկարանաք, չշփոթվեք, ընդհակառակը, ուժ, եռանդ հավաքեք ձեր մեջ, որպեսզի դժվարությունները հաղթահարեք, դուք էլ ձեր աշխատանքի բաժինը բերեք վերակառուցման աշխատանքներին, և մենք բոլորս մոտ ապագայում կարողանանք ողջունել նոր, վերածնված կյանքը մեր մայր հայրենիքի:

Մնացեք խաղաղությամբ:

Երկրաշարժից տուժած հաջորդ շրջանը Ստեփանավանի շրջանն էր, ուր ճանապարհվեց Վեհափառ Հայրապետը: Ճանապարհին Հայոց Հայրապետին դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը և Ստեփանավանի քաղսովետի ու շրջանի ղեկավար անձինք: Վեհափառ Հայրապետը նաև եղավ Կիրովո գյուղում, ուր այցելեց երկրաշարժից ավերված ռուսական մի եկեղեցի:

Շուտով երևաց և Ստեփանավան քաղաքը՝ Լոռվա աշխարհի այդ գողտրիկ անկյունը, որ Հյուսիսային Հայաստանի զարդն էր հանդիսանում:

Այստեղ Վեհափառ Հայրապետին ու նրա ուղեկիցներին տրվեց ճաշ, որի ընթացքում Նորին Սրբությունը բաժակ բարձրացրեց՝ ոգեկոչելով հիշատակը երկրաշարժի անմեղ զոհերի և հրավեր կարդալով միահամուռ ուժերով լծվելու ապագա առավել գեղեցիկ Ստեփանավանի կառուցման աշխատանքին: Արդարև, Վեհափառ Հայրապետը անձամբ ստանձնել է կազմակերպումը հիշյալ քաղաքի վերաշինության: Շինարար Հայրապետի վճռականությունը փոխանցվեց նաև ներկա գտնվող շրջանի ղեկավարներին, որոնք սկսեցին պատմել ավերված շինությունների և դրանք վերականգնելու ծրագրերի ու աշխատանքների մասին:

Ճաշից հետո Հայոց Հայրապետն այցելեց տեղի գործող Ս. Աստվածածին եկեղեցի, ուր նույնպես, ինչպես և Կիրովականում, կատարվեց հանգստյան պաշտոն: Հանգստյան պաշտոնից հետո Վեհափառ Հայրապետը դիմեց եկեղեցում խմբված տեղի բնակիչներին հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սիրելի հավատացյալներ, այս անգամ գալիս եմ ձեզ մոտ վշտալի սրտով: Այն աղետը, որ պատահեց, դեկտեմբերի 7-ի այդ ահավոր երկրաշարժը, կործանեց ոչ միայն մեր շեն քաղաքներն ու գյուղերը Շիրակի և Լոռվա աշխարհում, այլ նաև կորստյան մատնեց մեր ժողովուրդի մեկ կարևոր մասը. զոհվեցին մոտ երեսուն հազար հայ բնակիչներ՝ մեծ մասամբ երեխաներ: Կործանվեցին նաև մեր հոգիները, ձեր հոգիները: Ես երեսուներեք տարիներից ի վեր Ս. Էջմիածնում աշխատում եմ իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց: Այդ երեսուներեք տարիների ընթացքում ես ուրախանալու և մխիթարվելու բազում առիթներ եմ ունեցել, տեսել եմ մեր հայրենիքի վերածնունդը, վերաշինությունը, մեր ժողովուրդի կյանքի բարելավումը, մեր եկեղեցիների հետզհետե բարեզարդումը: Եվ տակավին ինչքա՜ն ծրագրեր ունենինք, պայծառ հեռանկարներ ապագայի համար: Բայց ահավասիկ այս աղետը՝ երկրաշարժը, եկավ և փոխեց մեր կյանքի պատկերը: Բոլորս վշտահար ենք ու սգակիր: Նախ աղոթում ենք զոհվածների հոգիների համար, խորապես ցավում ենք, կարեկցում այն բազմաթիվ վիրավորներին,

մանավանդ երեխաներին և պատանիներին, որոնցից շատերը հաշմանդամ են մնալու: Ես եղա Լենինականում, Սպիտակում, եղա նաև Կիրովականում, ուր վնասները համեմատաբար քիչ են, և անավասիկ այժմ գտնվում եմ ձեր մեջ, որպեսզի իմ աչքով տեսնեմ այս տուժած քաղաքների և գյուղերի վիճակը: Մենք պիտի աղոթենք և մաղթենք, որ Աստված նոր ուժ, եռանդ պարգևի մեր վիրավոր ազգին, որպեսզի մեր ժողովուրդը հետզհետե բուժի իր վերքերը, վերականգնի իր տնտեսությունը, աշխատանքի անցնի և լծվի վերաշինության գործին, որ դրված է մեր առջև հիմա, այս անավոր երկրաշարժից հետո: Մենք այնպիսի ժողովուրդ չենք, որ հուսահատվենք, ինչքան էլ ծանր լինի հարվածը: Մեր ազգը ավելի քան երեք հազար տարվա պատմություն ունի: Դարերի ընթացքում հաճախ մեր ժողովուրդը ողբերգական շրջաններ է ապրել: Դուք գիտեք անշուշտ, որ ամենամեծ հարվածը մեր ազգին պատահեց 1915 թվականին, երբ ամբողջ Արևմտահայաստանը բնաջինջ եղավ: Գրեթե երկու միլիոն հայեր կոտորվեցին օսմանյան թուրքերի ձեռքով: Մեծ ողբերգություն էր այդ, սակայն մեր ժողովուրդը չհուսահատվեց, չհուսալքվեց, իր ուժերը մեկտեղեց և ստեղծեց իր նոր հայրենիքը՝ մեր այսօրվա Սովետական Հայաստանը, որ ավելի քան երեք միլիոն բնակչություն ունի: Հետևաբար այս հարվածն էլ, ինչքան էլ ծանր, պետք է հաղթահարվի, և մենք պետք է դառնանք ավելի ինքնավստահ, ավելի լավատես, կորով, ուժ հավաքենք մեր մեջ, մեր հոգիների և մեր բազուկների մեջ, որպեսզի այս քանդված քաղաքները և գյուղերը առաջիկա մի քանի տարիների ընթացքում վերակառուցվեն: Մեր կենտրոնական կառավարության կողմից հսկայական միջոցներ են տրամադրվում, մեծ ծավալով ծրագրեր են մշակվում, նախագծեր են կազմվում այդ ուղղությամբ: Սա մեզ համար մխիթարություն է: Մեզ համար մխիթարություն է նաև այն, որ արտասահմանի ամբողջ հայ ժողովուրդը մեզ հետ է հոգով ու սրտով, վշտակից է, սգակիր, բայց նաև արթուն, ամուր կանգնած՝ իր օգնության ձեռքը երկարելու մեր մայր երկրին, ավերված շրջանների վերակառուցման, վերաշինության համար: Գրեթե աշխարհի բոլոր ծագերից նրանց ներկայացուցիչները այս վերջին երկու ամիսների ընթացքում եկան Հայաստան, Սուրբ Էջմիածին՝ բարձրաստիճան հոգևորականներ, աշխարհական մարդիկ, բարեգործական, մշակութային, հայկական կազմակերպությունների ղեկավարներ, մամուլի աշխատողներ, բոլոր ջերմ սրտով, սիրով և պատրաստակամ հոգով՝ օգտակար լինելու հայրենիքին: Հենց այս օրերին համայն աշխարհի հայության առջև դրված է այս հարցը: Այդ նպատակով ես հրավեր ստացա Ամերիկայից: Մի շաբաթ հետո պիտի մեկնիմ Նյու Յորք, որտեղ պիտի հավաքվեն երկու Ամերիկաների հայկական համայնքների բոլոր ներկայացուցիչները: Այնտեղ պիտի խոսեմ երկրաշարժի հետևանքով տեղի ունեցած այս ավերումների մասին, պիտի պատմեմ այն, ինչ որ իմ աչքով տեսա Լենինականում, Սպիտակում, Կիրովականում և այստեղ, պիտի ներկայացնեմ նրանց վերաշինական այն ծրագրերը, որոնք վերաբերում են ավերված քաղաքների, հատկապես Ստեփանավան քաղաքի վերակառուցմանը: Ես մեր պետական իշխանությանց հետ համաձայնեցի, որ ամերիկահայությունից ակնկալվող բոլոր օժանդակությունները կենտրոնանան ձեր քաղաքի վրա, նվիրվեն Ստեփանավանի վերակառուցման գործին: Քիչ հետո ես հանդիպում պիտի ունենամ ձեր քաղաքի քաղսովետի նախագահի հետ, որին վերջերս ճանաչեցի: Մի քանի օր առաջ նա իմ մոտ էր եկել: Ես նրանից պիտի վերցնեմ այս քաղաքի

վերաշինության աշխատանքներին վերաբերող բոլոր կարևոր տվյալները: Ես վստահ եմ, որ ամերիկահայությունը սիրով պիտի ընդառաջի իմ առաջադրանքին, և հայկական ամեն մեկ կազմակերպություն այնտեղ պիտի ստանձնի պարտականությունը վերաշինելու այս կամ այն շենքը՝ դպրոց, հիվանդանոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, սպորտի պալատ, առողջարան, գործարաններ և այլն: Շատ գործ կա անելու: Ահա այսպիսի ծրագրով եմ ես գնում Ամերիկա:

Դրախտավայր է ձեր քաղաքը: Ժամանակ կանցնի, կվերածնվի Ստեփանավանը և էլ ավելի դրախտային տեսք կունենա օգնությամբը նաև ամերիկահայ մեր ժողովրդի: Ես սրտանց ցանկանում եմ Ամերիկայից վերադարձին վերստին այցելել ձեզ, ձեր քաղաքը և իմ աչքերով տեսնել Ստեփանավանի վերածնունդը:

Մեր սերը, մեր գուրգուրանքը, մեր մխիթարության խոսքը և Աստուծո օրհնությունը բոլորիդ Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնից:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ». ամեն:

Ապա Վեհափառ Հայրապետն իր ուղեկիցներով շրջագայեց քաղաքում, եղավ առավել վնասված թաղամասերում: Հեռվից նայելիս թվում էր, թե որոշ հինգհարկանի շենքեր բոլորովին չեն վնասվել երկրաշարժից: Սակայն ավելի մոտիկից նայելիս պարզվում էր, որ խախուտ վիճակում կանգուն են մնացել միայն կառույցների արտաքին պատերը, իսկ ներսի բետոնե սալիկներն ու պատերը քանդվել էին վերից-վար: Վեհափառ Հայրապետը զրուցում էր փողոցներում խմբված ժողովրդի հետ, հետաքրքրվում նրանց վիճակով, ցավակցում, մխիթարական ու հուսադրող խոսքեր ասում նրանց: Տխուր էր քաղաքի պատկերը, տխուր ու սգակիր էին քաղաքի բնակիչները, տխուր էր նաև Ամենայն Հայոց կաթողիկոսը: Բայց նա փլատակների միջով քայլում էր անայլայլ վճռականությամբ, մոտենում կիսավեր շենքերին, նայում, մտածում... Ինչարար Հայրապետի այս վճռականությունը հուսադրում էր տեղի ղեկավար մարմիններին ու ժողովրդին, հույս ու հավատ ներշնչում ապագայի հանդեպ:

Հայոց Հայրապետը մի քանի անգամ լուսանկարվեց ինչպես Ստեփանավանի, այնպես էլ Սպիտակի-փլատակների մոտ:

Հատկանշական է, որ և՛ Սպիտակում, և՛ Ստեփանավանում հավատացյալ ժողովուրդը Հայոց Հայրապետից խնդրում էր ոչ միայն վերանորոգել ավերված եկեղեցիները, այլև նորերը կառուցել:

Արևը մայր էր մտնում արդեն, երբ Վեհափառ Հայրապետը ուղևորվեց դեպի Էջմիածին՝ իր հետ տանելով անջնջելի տպավորություններ:

ԱԲՐԱՀԱՄ ԱԲԵՂԱ ՄԿՐՏՉՅԱՆ



ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հայաստանում անցեալ Դեկտեմբերին տեղի ունեցած մեծ երկրաշարժից անմիջապէս յետոյ Վեհափառ Հայրապետը նշանակեց մի Յանձնաժողով ստանալու և աղետեալներին բաժանելու այն ապրանքները՝ հագուստեղէն, դէղօրայք, բժշկական սարքաւորումներ, սննդամթերք, վերմակներ, վրաններ, խոհանոցային պիտոյքներ և այլ պարագաներ, որոնք ուղարկուում էին արտասահմանից Ս. Էջմիածնի հասցէով:

Յանձնախմբին մաս էին կազմում Տ. Եզնիկ քահանայ Պետրոսեանը, տեսուչ Հոգևոր Ծեմարանի, Տ. Արտակ աւագ քահանայ Սիմոնեանը, վարիչ Մայր Աթոռի Մկրտարանի, Յարութիւն Մելեանը, գլխաւոր հաշուապահ Մայր Աթոռի, Ներսէս Գարամանուկեան, տնտեսական բաժնի վարիչ Մայր Աթոռի և ճարտարապետ Յակոբ Բաբախանեանը, որոնք Մայր Աթոռի միաբանների, պաշտօնեաների և Հոգևոր Ծեմարանի ուսանողութեան օգնութեամբ, գնահատելի կարգապահութեամբ ու բարեխղճութեամբ կատարեցին իրենց վրա դրուած պարտականութիւնը:

Ներկայացնում ենք քանակը արտասահմանից առաքուած նուէրների՝

1. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՑ	340	տոննա
2. ՇՎԷՅՑԱՐԻԱՅԻՑ—ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԿՈՂՄԻՑ	30	»
3. ՖՐԱՆՍԻԱՅԻՑ, ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՑ ԵՎ ԼԻՈՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ	30	»
4. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ—ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՑ	155	»
5. ԱՆԳԼԻԱՅԻՑ	18	»
6. ԹՈՒՐՔԻԱՅԻՑ, ՊՈԼՍԱՀԱՅԵՐԻՑ	36	»
7. ՅՈՐԴԱՆԱՆԻՑ	24	»
8. ԱԻՍՏՐԻՈՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻՑ	15	»
9. ԿԻՊՐՈՍԻՑ	16	»
10. ՍԻՐԻԱՅԻՑ—ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՑ	30	»
11. ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻՑ—ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԻՑ	38	»
12. ՊՐԱԶԻԼԻԱՅԻՑ	2	»
13. ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻՑ	1	»
14. ՈՒՐՈՒԳՈՒԱՅԻՑ	1	»
15. ԼԵՀԱՍՏԱՆԻՑ—ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՄԻՑ	260	»

16. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ	100	»
17. ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻՑ	47	»
18. ՌՈՒՄԻՆԻԱՅԻՑ	10	»

Մայր Աթոռիս Յանձնաժողովը Դեկտեմբերի 8-ից սկսեալ մինչև 1989 թուականի Յունուարի 29-ը, վերոյիշեալ մօտ 1200 տոննա ապրանքները՝ բեռնատար 12 մեծ ավտոմեքենաներով, միշտ մի հոգևորականի գլխաւորութեամբ, պարբերաբար մի քանի անգամներ օգնութիւնները բաժանել է աղէտեալ վայրերի կարիքաւորներին՝ Լենինականում, Սպիտակում, Կիրովականում, Ստեփանավանում, տուժած գիւղերում և Հայաստանի այն շրջաններում, ուր փոխադրուել են բազմաթիւ աղէտեալներ ու տեղաւորուել տարբեր քաղաքներում, Էջմիածնի շրջանի գիւղերում: Կանոնավոր կերպով բաժանուել են սննդամթերք և խաղալիքներ, նաև վիրաւոր երեխաներին, որոնք խնամւում են Երևանի, Աշտարակի, Թալինի, Իջևանի և Էջմիածնի հիւանդանոցներում: Հագուստեղէն և սննդամթերք բաժանուել են նաև Ախալքալաք (Վրաց. ՍՍՀ), Ղարաբաղ, Մոսկուա և Օրջոնիկիձէ քաղաքները տեղափոխուած աղէտեալներին:

Արտասահմանից ուղարկուած այլ մեծաքանակ օգնութիւններ յանձնուել են ու բաժանուել պետական բաշխիչ մարմինների կողմից, իսկ արտասահմանեան եկեղեցական որոշ կազմակերպութիւնների առաքումները բաժանուել են ուղղակի աղէտեալներին, տուեալ կազմակերպութիւնների ներկայացուցիչների ձեռամբ:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
30 Յունուար 1989 թ.



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռիս Դիւանը լիազօրուած է այսու հրապարակելու՝ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսարանին նուիրաբերուած գումարները, անցեալ 1988 թուականի Դեկտեմբերի 7-ի Հայաստանի երկրաշարժից աղէտեալների օգտին:

1. Սեքիւռ կաթոլիք—Փարիզ	50.000	դոլլար
2. Լութերական Եկեղեցուց—Դրեզդեն	50.000	»
3. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից (Ժընեւ)	50.000	»
4. Իտալական «Գարիթաս»-ից—Հռոմ	5.000	»
5. Անարատ Յղութեան հայ քոյրերից—Հռոմ	2.000	»
6. Ուրուկուայի հայ գաղութից	110.560	»
7. Իրանահայ գաղութից	100.000	»
8. Աթէնքի արքեպիսկոպոսից	84.000	»
9. Տիւքոնիշէս Վեռքից—Շտուտգարդ	6.000	»
10. Տիար Ալեքսանդրից—Սիտնի	5.000	»
11. Մերձաւոր Արևելքի հայերից	30.000	»
12. Տիկին Ք. Հոլովուէից	400	»
13. Մի հայ բարերարից	2.500	»
	495.460	դոլլար

Վերոյիշեալ գումարը և յետագայ նոր նուիրատուութիւններից գոյացած ընդհանուր գումարը, պիտի յատկացուի աղէտեալ շրջաններում մի շինարարական նպատակի իրականացման, որի մասին մօտ ապագայում Դիւանս պիտի հրապարակի անհրաժեշտ մանրամասնութիւններ:

Այս նպատակի համար նուիրատու անձինք կարող են իրենց նուէրը փոխանցել հետևեալ հասցէին՝

Union de Banques Suisses
8, Rue du Rhone
Geneve, Suisse
Compte Catholicos Vasken Paidjian
Fond sinistres d'Armenie

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
30 Յունուար 1989 թ.



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերյան աղետը սրտաշարժեց ողջ մարդկությանը: Համամարդկային եղավ նաև աջակցությունը: Անշուշտ առավել տագնապեցին հայ ժողովրդի զավակները ի սիյուս աշխարհի: Եվ արձագանքեցին ով ինչով կարող էր: Մայր Հայրենիքին աջակցելու իր պատրաստակամությունը շտապեց հայտնել նաև Սփյուռքի հայ կաթողիկե համայնքը՝ ի գլուխ ունենալով Հովհաննես-Պետրոս ԺԷ կաթողիկոս-Պատրիարքին:

Նորին Սրբությունը իր շքախմբով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց դեկտեմբերի 29-ին: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Վեհարանում պաշտոնապես ընդունեց կաթողիկոս-Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին: Ապա բարձրաստիճան հյուրերը եղան Մայրավանքի թանգարաններում:

Դեկտեմբերի 30-ին նրանք այցելեցին Մատենադարան, ապա նրանց ընդունեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիկին Ստեփան Վարդանյանը: Հանդիպման ջերմ և գործարար մթնոլորտում զրույց ծավալվեց երկրաշարժի հետևանքների վերացման գործին հայ կաթողիկե համայնքի բերելիք օժանդակության մասին:

Դեկտեմբերի 31-ին հայ կաթողիկե Եկեղեցու գլուխն ու ներկայացուցիչները մեկնեցին Լենինական՝ սեփական աչքերով չափելու մեր ժողովրդի ողբերգությունն ու շեն ու շենշող քաղաքի ավերումը: Հյուրերը Մայր Աթոռ վերադարձան սրտաբեկ, բայց և պատրաստակամ իրենց առավելագույնը կատարելու՝ Մայր Հայրենիքի ավերված քաղաքներն ու գյուղերը վերականգնելու համար:

Նորին Սրբություն Հովհաննես-Պետրոս ԺԷ կաթողիկոս-Պատրիարքը իր շքախմբով Մայր Հայրենիքից մեկնեց հունվարի 3-ին:

ԹՂԹԱԿԻՑ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, կիրակի.—Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել արդ. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց հյուրաբար Մայր Աթոռում գտնվող հայ կաթողիկե Վարդան եպիսկոպոս Աչքարյանը:

Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 5-ին, հինգշաբթի.—Ծրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 6-ին, ուրբաթ.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Վեհափառ Հայրապետը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից և հուզիչ քարոզ խոսեց (տես էջ 6):

* * *

Հունվարի 7-ին, շաբաթ.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

* * *

Հունվարի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գրիգորիս

եպս. Բունիսթյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

*
* *

Հունվարի 18-ին, ուրբաթ.—Ցօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Հունվարի 15-ին, կիրակի.—Բարեկենդան Առաջաւորաց պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն արքեպս. Քեշիշյանը:

«Հայր մեր»-ից առաջ իմաստալից քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը (տես էջ 11):

Հավարտ պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ ի հիշատակ երկրաշարժի աղետից զոհվածների:

*
* *

Հունվարի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան աբղ. Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ» (Հռովմ. Ե 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունվարի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԱՎԱԳ ԵՊՍ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՍԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«ՈՎ Է ԻՄ ԸՆԿԵՐԸ»

(Ղուկ. Ժ 30)

Երկու հազար տարիներու ծանրութիւնը կրող այս հարցումը ուղղուած էր մեր Տիրոջ՝ Հրեայ ժողովուրդի օրինականներէն մեկուն կողմէ: Ի պատասխան, Յիսուս պատմեց հետևեալ առակը, բոլորիս ծանօթ «Բարի Սամարացի» վերնագիրով:

Մարդ մը երբ կը ճամբորդէր քաղաքէ մը ուրիշ քաղաք, մեծ արկածի մը հանդիպեցաւ: Վիրաւոր ու կիսամեռ, ճամբուն եզերքը ինկած՝ օգնութեան կը կարօտէր: Այդ ճանապարհով անցաւ ազդեցիկ անձնաւորութիւն մը, բայց առանց որևէ ուշադրութիւն դարձնելու գնաց իր գործով: Ասուսջինին նման պատասխանատու դիրք վայելող երկրորդ ճամբորդ մըն ալ անցաւ: Ան ևս օգնութեան ոչ մէկ ձէռք երկարեց. մնաց անտարբեր ու անուշադիր՝ օգնութեան աղէրսին նկատմամբ:

Սակայն տարբեր եղաւ երրորդ ճամբորդի վերաբերմունքը. Սամարացին տեսնելով վիրաւոր ճամբորդին անմխիթար վիճակը՝ խղճաց ու գթաց: Իր սեփական խիղճը չընդդիմացուցեց անտարբեր մնալ: Մօտեցաւ իրեն անձանօթ, վիրաւոր եղբօր՝ ձէթով ու գինիով սրբեց անոր վէրքերը ու տարաւ օթևան մը, որպէսզի լաւագոյն կերպով կարողանայ խնամել: Երկրորդ օրը օթևանի Տիրոջ գումար մը տրամադրելով՝ Սամարացին պատուիրեց, որ խնամքը շարունակուի մինչև վերջնական ապաքինում:

Առակի վերջաւորութեան Յիսուս հարց տուաւ օրինականին թէ՝ ըստ քեզի այդ երեք անձերէն որն է վիրաւորին ընկերը. ու երբ պատասխանը եղաւ՝ «ան ով անոր գթաց», մեր Տէրը պատգամեց յայտարարելով՝ «դուն ալ նոյն ձևով ապրիր կեանքդ որպէսզի ժառանգես յաւիտենական կեանքը»:

Այստեղ մեր Տէրը շատ յստակ կերպով դէպի յաւիտենական կեանք առաջնորդող ճանապարհներէն մին կը նկատէ գթասրտութիւնը: Իսկ գութ ու կարեկցանքը իսկական արժէք ունենալու համար ինչքան կարելի է կատարեալ պէտք է ըլլան: Ահա՛ աւետարանի հասկացողութեամբ տիպար հոգին ճշմարիտ ընկերոջ: Ահա՛ «ով է իմ ընկերը» հարցումին ճշմարիտ պատասխանը: Ընկեր կրնայ ըլլալ ամէն մարդ արարած, համայն մարդկութիւնը, որովհետև ամէն մէկ անձ իր հոգիին մէջ կը կրէ մասնիկ մը Աստուծոյ էութենէն և հետևապէս ամէն անհատ իր հերթին արժանի կը դառնայ բոլորի հոգածութեան ու գուրգուրանքին:

Սիրելի հաւատացեալներ,

Անյիշատակ ժամանակներէն մինչև օրս տիեզերքի տարերային ուժերը աղէտներ պատճառած են մարդկութեան՝ ամէնուրեք սփռելով ցաւ, վիշտ ու մահ: Բնութեան ուժերը զօրաւոր կերպով կը պոռթկան, երբեմն նոյնինքն բնութեան աւելի մեծ բարիքին համար:

Տարերային մեծ աղէտի հետևանքով այսօր վիրաւոր է Հայ ժողովուրդը: Ու այս աղէտահար վիճակին մէջ մեր հարցումը պէտք է ըլլայ ոչ թէ ինչո՞ւ յատկապէս մեզի պատահեցաւ այս բոլորը, այլ՝ բնութեան այս զայրոյթէն վերջ, ինչպէ՞ս մենք զմեզ պէտք է դրսևորենք որպէս Հայ քրիստոնեայ ժողովուրդ, բարի Սամարացիի կերպարը մեր մտապատկերին մէջ պահելով:

Հայրենեաց Ծիրակ ու Լոռի աշխարհներու աղէտին մեր տալիք պատասխանը,

անհատապէս թէ հաւաքաբար՝ որպէս ժողովուրդ, հայավայել ու քրիստոնէական վարվելակերպի չափանիշ մը պիտի հանդիսանայ անտարակոյս գալիք սերունդներու համար:

Այսօր և՛ համայն աշխարհը, և՛ մենք՝ հայերս, որ ի Հայրենիք և որ ի սփիւռս աշխարհի վիրաւոր Հայաստանի ճանապարհով անցանք և պիտի անցնինք: Արդեօք բարի Սամարացիի առակին մէջ պատկերուող երեք անձնաւորութիւններէն ո՞ր մեկուն պիտի նմանինք մեր որդեգրած գործընթացով, մեր արարքներով:

Առաջին երկու անձերը իրենց վայելած դիրքերէն ելլելով, կարող էին ամէն ինչ ընել որպէս ազդեցիկ ու պատասխանատու անձնաւորութիւններ բայց, աւաղ, ոչ մէկ միջոցառումի չդիմեցին. անտարբեր մնացին չխանգարելու համար իրենց հանգիստը: Երրորդ անձը սակայն, որմէ ամէնէն քիչը կ'ակնկալուէր, ըրաւ իր կարելին, նոյնիսկ ջանալով որ այդ կարելին ըլլայ ամբողջական: Այո, բարի Սամարացին կատարեց իր մարդկային պարտականութիւնը ու արժանացաւ մեր Տիրոջ օրհնութեան և հետևապէս յաւիտենական կեանքը ժառանգելուն:

Փառք Ամենակալին, որ Հայ ժողովուրդը իր պետական կազմով, Հայաստանեայց Առաքելական իր Մայրենի Եկեղեցիով, սփիւռքի տարածքին վրայ գործող իր միութենական թէ հայրենասիրական կազմակերպութիւններով տակաւին կը շարունակէ իր պարտականութիւնը կատարել աղէտահարներուն շուտափոյթօրէն օժանդակութիւն ցուցաբերելու իմաստով և ի մօտոյ, գարնան նոր ծաղկումին հետ, վերաշինութեան համար նախաձեռնուած հսկայական աշխատանքներու իմաստով:

Վերոյիշեալ ըմբռնումով է որ վեց իրաքահայեր, իրաքահայ թէմին ծառայող վեց հայորդիներ այցի եկանք Մայր Հայրենիք, Միածնաէջ այս Սուրբ Տաճարին մէջ մեր աղօթքները միացնելու ձեր բոլորի աղօթքներուն աղէտի հետևանքով զոհուած մեր եղբայրներուն, քոյրերուն և մեր սիրասուն փոքրիկներուն հոգիներուն խաղաղութեան համար: Եկած ենք յանուն իրաքահայ թեմի 20 հազար ժողովուրդին, այդ ժողովուրդին ծառայող ութը եկեղեցիներուն ու հոգևորականութեան, թեմական ու թաղական վարչական մարմիններու, վեց Միութենական հաստատութիւններու—Այո, եկած ենք այս բոլորին անունով մեր վշտակցութիւնը յայտնելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, հաստատելու համար թէ Հայաստանի վիշտն ու կսկիծը որքան ձերն է, նոյնքան այդ ցաւը կը խոցէ մեր հոգին և կը մորմոքէ մեր արիւնաքամ սիրտը նոյն ուժգնութեամբ: Եւ բերինք մեր լուման, հայ ընտանիքներէն կաթիլ առ կաթիլ հաւաքուած զոհաբերութիւնը՝ միացնելու այն հսկայական նիւթական կարիքներուն, որ անհրաժեշտ են վերականգնելու մեր գեղեցիկ քաղաքներն ու շէն գիւղերը:

Ութը-ինը օրեր առաջ պատիւը ունեցանք ուղեկցելու Հայոց Հայրապետին Սպիտակ, Կիրովական և Ստեփանաւան, ամոքելու համար վշտահար ժողովուրդին կսկիծը: Մեր կենդանի աչքերով տեսանք արհաւիրքին տարողութիւնն ու աղէտին պատճառած նիւթական վնասները: Սակայն սրտի գոհունակութեամբ նկատեցինք նաև, որ Հայ ժողովուրդը մէկ սիրտ ու մէկ հոգի դարձած, աւելի միակամ ու միաբան, ընդունած է բնութեան տարերքին մարտահրաւէրը և արդեն յուսադրող քայլեր կ'առնէ զայն յաղթահարելու համար:

Որևէ դժուարութիւն, մանաւանդ այսպիսի սարսափելի տարողութեան դժուարութիւն յաղթահարելու կարևորագոյն ազդակներէն մին է չընկրկիլ, անայլայլ վճռակամութեամբ յառաջ ընթանալ: Եւ այդ վճռակամութեան պատկերը ես տեսայ Ստեփանաւանի ճանապարհին, երբ մեր ինքնաշարժերը անցան երկար թունելէ մը: Յանկարծ խաւարն ու մթութիւնը պարուրեցին մեզ: Ու ես մտածեցի թէ որքան իրական է այս պատկերը մարդկային կեանքին համար ևս: Բոլորս ալ մեր կեանքի ընթացքին կ'անցնինք այդպիսի խաւար ու մութ իրավիճակներէ, սակայն անշեղ հաւատք ունեցած ենք լոյսի հանդէպ և ինչքա՜ն երկար եղած է խաւար գետնուղին, ինչքա՜ն երկար տևած է մթութիւնը, մեր հաւատքի ուժով յաղթանակած ենք զայն այն վճռակամութեամբ, որ լոյսը անպայման պիտի բացուի:

Այո, այդ լոյսը անպայման պիտի բացուի, Վեհափառ Տէր, Ձեր անձնուէր ջանքերով Հայաստանի և սփիւռքի մէջ. այդ լոյսը պիտի բացուի անպայման, սիրելի ժողովուրդ, ձեր համբերութեամբ, միասնական կամքով և աշխատասիրութեամբ. այդ լոյսը պիտի բացուի այս հսկայական երկրի ժողովուրդներու եղբայրական օժանդակութեամբ, և այդ լոյսը պիտի բացուի ողջ աշխարհի Հայ ժողովուրդի նկատմամբ ցուցաբերած համակրանքով և անմիջական օգնութեամբ:

«Կեցո՛, Տէր, զժողովուրդս Քո և օրհնեա՛ զժառանգութիւնս Քո, հովուեա՛ և բարձրացո՛ զսոսայ, յայսմհետէ մինչև յաւիտեան»: Ամէն:



ԱՆՍՈՎՈՐ, ՏԽՈՒՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տարիներով նվիրագործված է մի գողտրիկ սովորություն. Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը Նոր տարին դիմավորում են նախ Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հետ և հետո միայն ժամացույցի 12 զանգերը ունկնդրում ընտանեկան հարկի տակ: Այդ երեկույթները անցնում են ուրախ, անցյալ տարին կատարածի վերլուծությամբ և գալիք հույսերի փայլփայլումով: Ճեմարանի աշակերտությունը պատրաստում է ճոխ հայտագիր, որն իր գագաթնակետին է հասնում սրամիտ կաղանդչեքերով:

1988 թվականը եզրափակող Նոր տարվա երեկոն անսովոր էր: Դեկտեմբերի 7-ի երկրաշարժը սպառնում էր ընկճել հայ հոգին, մարել Ամանորի մոմերը հայի հարկի տակ: Ոչ ոք սիրտ չուներ, ոչ ոք չգիտեր ինչ անակնկալ կբերի նոր տարին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի միրտն էլ վշտի ու տագնապի մեջ էր: Բայց նա ուներ նաև նահապետի սթափ հայացք՝ կյանքի չարաղետ անակնկալների մասին. գիտեր, որ հայը հուսալքվելու իրավունք չունի, պետք է դիմագրավի ճակատագրի հարվածները և իր մեջ ուժ գտնի հաղթահարելու դրանք, դժվարությամբ, բայց անպայման հաղթահարել: Պետք էր ոգի ներշնչել միաբանությանը և ճեմարանի սաներին, որ հարահոս կյանքը կա, ուստի պետք է վճռական լինել: Այս տրամադրությամբ Նորին Սրբությունը մտավ միաբանական ճաշարան՝ ողջունելու բոլորի Նոր տարին:

Հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանի շնորհավորական խոսքը և արտասանված բանաստեղծությունները նույն կսկիծն ու վիշտն էին արտահայտում, երգված շարականները՝ կարծես հոգեհանգիստ լինեին:

Խոսեց նաև Ամենայն Հայոց Հայրապետը այս տագնապի ու աղետի տարվա մասին և հույս ու հավատ ներշնչեց, որ ժողովուրդը կուղղի մեջքը, ոտքի կկանգնի և բաց ճակատով կներկայանա աշխարհին:

Ահա նոր տարվա երեկոյին, ի թիվս այլ բանաստեղծությունների, արտասանվեցին նաև հետևյալ հատվածները Ս. Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան մատեան»-ից: Դրանք համադրված են տարբեր գլուխներից՝ ավելի համահունչ դարձնելու համար մեր օրերին: Աղետի այս օրերին թող մեզ

ներվի այս համադրումը. պետք չէ սա մեղանչում համարել Նարեկացու տեքստի նկատմամբ:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՈՍՔ ԱՍՏԾՈ ՀԵՏ

Տե՜ր ամենայնի, արքա երկնավոր,
Աղաչում եմ քեզ ահա, բարեգո՜ւթ,
Ու պաղատում եմ բոլոր սրբերով.
Մի՛ լքիր անզոր տկարությունս
Եվ մի՛ անարգիր ալիքները իմ.
Կործանվածիս էլ մի՛ կուրացրու,
Մի՛ նվաստացրու կքվածիս նորեն,
Խոնարհվածիս էլ մի՛ ստորացրու
Եվ առկայծողիս մի՛ հանձնիր շնչին վայրագ հողմերի.
Մի՛ թող դողդոջիս ապավինազուրկ,
Սառածիս՝ անօգ, մերկ ու անհանդերձ:
Տագնապահարը թող որ չմնա անճար, անսփոփ,
Հարկը խարխլված՝ անխնամակալ,
Պատկերն հնացած՝ անշուք, անպատիվ,
Պարարտությունը թող չանհամանա,
Թող չալեկոծվի նավը իմ հոգու,
Երկարությունը հույսիս՝ չխզվի,
Ու չկտրվի շավղիս լարն իսպառ,
Միտքս չցնդի, ու չքայքայվի կազմվածքը գոյիս,
Այնտեղ իսկապես պետք է ողորմել,
Ուր չքացել է լիովին ամեն ակնկալություն.
Այն ժամանակ է բարեգործել պետք,
Երբ տեսությունն է մտքի խափանված.
Այնժամ պետք է միշտ մարդասեր լինել,
Երբ տկարության վտանգը իսպառ
Տիրապետում է ներսից ու դրսից.
Այն ժամանակ է լինում հարկավոր
Բժշկությունը սրբազան ձեռքիդ,
Երբ բոլորովին տեղի է տալիս կենդանությունը
Մարդու էության բոլոր մասերում.
Այնտեղ պետք է միշտ օգնության հասնել,
Ուր չկա ելքի որևէ հնար.
Այնժամ կերևա մեծությունը քո,
Երբ բուժես վերքերն հուսահատության.
Այն է իսկական քո բնությունը,
Որ անակնկալ ժամին փրկություն հրաշագործես.
Հաղթահանդեսը քո այն կլինի,
Որ վերջին շնչում կյանքի փակված դուռն իմ առաջ բանաս.
Որով և քավես, բուժես, նորոգես,
Կյանք տաս, պաշտպանես, պատկերավորես,

Վերականգնես ու վերահաստատես,
Ստեղծագործես կրկին երջանիկ անարատությամբ.
Զի քո ձեռքում են և՛ կարողություն,
Ե՛վ փրկագործում, և՛ ողորմություն.

*
* *

Գիշեր է խավար, մռայլ ու անշող.
Մահվան անհատնում նիրհով եմ քնած,
Մինչդեռ տագնապը կանչողի փողի ճեպում է անդուլ.
Եվ հարսանիքի դուռն ահավասիկ փակված է իմ դեմ:
Ինչպե՞ս ստանամ այսքան վշտերիս մխիթարություն,
Վարանումներին իմ, այսքան մռայլ ու անլուսաշող,
Կյանքի հուսավառ լուսավորություն որտեղի՞ց խառնեմ,
Կամ ո՞ւր հաստատեմ գարշապարներն իմ,
Ո՞ր ապավենին աչքերս հառեմ,
Ի՞նչ անդորր գտնեմ այս ծփանքներին
Կամ ո՞ր ըղձալի անքուրթ դյուրության ձեռքն իմ կարկառեմ:
Եթե բարձրաբերձ ձեղունին երկնի,
Այնտեղից ծծումբ ու հուր անձրևեց Սոդոմի վրա.
Եթե խորախոր անդունդին երկրի,
Սա բացեց կոկորդն իր խժռողական,
Ընթացքիս պահին կանգնում եմ տարտամ,
Դեռ չարդարացած՝ նորից մեղանչում,
Դեռ չխաղաղված՝ հուզվում եմ դարձյալ,
Արշավ չսկսած՝ իսկույն նահանջում,
Գնալուս պահին ընկրկում եմ ետ,
Ոտքի չկանգնած՝ ընկնում եմ կրկին:
Վիրավորվում եմ՝ նախկին վերքերս դեռ չդարմանած,
Դեռ չամրապնդված՝ խախտվում եմ դարձյալ,
Զլցված՝ նորից մնում եմ թափուր,
Այստեղ մի փոքր կարգի եմ գալիս, այնտեղ՝ քայքայվում.
Դեռ չհավաքված՝ ցրվում եմ կրկին,
Հազիվ մի փոքր սիրտ առած՝ դարձյալ լքվում եմ անհույս.
Հազիվ բարձրացած՝ ցած եմ գլորվում,
Մոտենում եմ, որ դաշինք հաստատեմ,
Բայց ուխտակորույս վռնդվում եմ դուրս.
Ննջում եմ ահ ու տարակուսանքով,
Արհավիրքներով զարհուրած՝ զարթնում:
Ջարդվածս անամոք, կործանվածս անբույժ:
Արդ, ո՞ւր կարող եմ գտնել փրկություն,
Տեր, տո՛ւր սփոփանք դառը վշտերով
Ուժգին հեծեծող հուսահատվածիս:
Եվ քեզ, սուրբ Հոգով, բարձրյալ Հորդ հետ,
Իշխանությո՞ւն, փա՞ռք հավիտյանս, ամեն:

*
* *

Հանգստացրո՛ւ Հոգնատանջիս, Տե՜ր,
Այսքա՜ն բազմաձուփ տառապանքներից,
Ցրի՛ր կործանվող հոգուս տագնապներն ամենավարան,
Դաւնությունները վշտերով հանդերձ,
Հառաչանքները ցավագնած սրտիս,
Թշվառությունները իրենց անձկությամբ,
Խորտակումներիս ուլբը դառնահեծ,
Վհատությունն իր վարանումներով,
Տատամսումները այս իրենց թմրությամբ,
Օգնակա՛ն եղիր տկարիս, տարտամ ու բազմատխուր,
Բարեգործ աջով քո շնորհաձիր,
Նորոգող ձեռքով, մատով կենսաբաշխ,
Խափանի՛ր չարի հնարքները նոր
Եվ բանսարկուի խարդավանքը հին,
Ի մահ ձգողի դրդումներն օտար,
Հանապազաջան եղեռնագործի
Մտապատկերներն անարգ, անվայել,
Դժնդակ դևի որոգայթները ցնորապատիր,
Որպեսզի նիրհեմ երկյուղով,
Բայց ուրախությամբ, քո շնորհներով, արթնանամ կրկին.
Թող հանեմ դարձյալ հոգու բերկրությամբ.
Փրկի՛ր խեղդվելուց, վե՛րջ տուր տագնապիս,
Սփոփա՛նք տուր իմ տխրություններին, տանջանքիս՝ անդորր,
Վիշտս փարատի՛ր, տվայտանքներիս խաղաղություն բեր,
Լացիս՝ ամոքում, հեծեծանքներիս՝ ապաքինություն,
Ողբ ու կականիս՝ դադար ու հանգիստ:
Տե՜ր ողորմության և պարգևատու ամեն քաղցրության:

*
* *

Ահա ենթարկված այսքան անողորմ,
Դառն ու սրտաբեկ հուսահատության
Անճողոպրելի տագնապ ու երկյուղ,
Անսփոփ սարսափ ու դող անվախճան,
Անմխիթար լաց, անամոք կորուստ,
Կենացդ փայտով հանդարտեցրո՛ւ մրրիկը ծովիս,
Հրամանովդ սանձի՛ր պատկերներն այս երկրակենցաղ,
Քանզի եթե, Տե՜ր, ողորմությունդ ցույց տալու լինես,
Լույծ կոհակները ապառաժից էլ կարծր կդառնան,
Իսկ եթե անտես անես ցամաքում,
Ամուր գետինը անկայուն դարձած,
Խարխլված, փլված՝ իսկույն կհոսի մեր ոտքի տակից:
Ամրապնդի՛ր ինձ անխախտ, անվրդով մի վստահությամբ.
Հաստատի՛ր, օրհնյա՜լ, իմ մեջ անկասկած,
Աներկբայելի հույսի ամրություն.
Պաշտպանի՛ր աջովդ ամենախնամ.

Սասանվածիս տո՛ւր անխոով անդորր,
Տարակուսյալիս՝ լույսի ապավեն,
Բազմաչարչարիս՝ մեծ երջանկություն,
Հուսահատվածիս՝ օգնություն կյանքի,
Լքվածիս՝ անեղծ օժանդակություն
Ու նահանջածիս՝ վերընթացություն անսայթաքելի։
Քանի որ դու ես տերն ամենայնի,
Եվ ամենայն ինչ քեզնից է միայն.
Քո ձեռքն է բաշխում այն բոլորն, ինչ որ
Հավաստի պետք է ամեն մի կյանքի.
Եվ քեզ վայել է փա՜ռք հավիտենից հավիտյանս. ամեն։



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն: Ձեռնադրյալն էր բարեշնորհ Խաչատուր սարկավագ Գյուլանջյանը:

Դեկտեմբերի 17-ին, շաբաթ օրը, երեկոյան, տեղի էր ունեցել «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտավիլակությամբ Տ. Հովհաննես քհն. Դանիելյանի, որը վկայեց նորընծայի՝ Խաչատուր սարկավագ Գյուլանջյանի հոգևոր արժանիքների և պատրաստականության մասին:

Դեկտեմբերի 18-ին, կիրակի օրը, Ս. Գևորգ եկեղեցում հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերուսյդարյանը: Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյալներով:

«Ողջույն»-ից առաջ տեղի է ունենում քահանայական օծում: Նորընծան հրաժարվում է աշխարհիկ կյանքից, և սրբազան հայրը սրբալույս մեռոնով օծում է նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ կոչելով նրան Տ. Նորայր քահանա Գյուլանջյան:

Ձեռնադրության վերջում սրբազան հայրը շնորհավորում է նորընծային և խրատական խոսքով բովանդակալից քարոզ խոսում:



* * *

Տ. Նորայր քահանա Գյուլանջյանը ծնվել է 1958 թ. հունվարի 1-ին Երևանում:

1964—69 թթ. սովորել է Երևանի Դանիել Վարուժանի անվան № 89 դպրոցում:

1969 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1976—78 թթ. ծառայել է սովետական բանակում:

1979—84 թթ. սովորել և ավարտել է Երևանի մեքենաշինական տեխնիկումը:

1985 թվականից մինչև 1988 թվականը ծառայել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցում:

1988 թ. հունվարից ծառայում է Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում:

Նորընծան իր քառասունքը կանցկացնի Ս. Էջմիածնի Մայր Աթոռում, որից հետո քահանայագործելու է Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցում:



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

1988 թուի Նոյեմբեր 17 եւ 18-ին, Ամենայն Սրբոց Տօնին առթիւ Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ քահանայական ձեռնադրութիւն տեղի ունեցաւ, ձեռամբ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ Եպիսկոպոս Սասատուրեանի:

Սոյն քահանայական ձեռնադրութիւնը մաս կը կազմէր Իրաքահայ Թեմի վերակազմութեան 350-ամեակի տօնակատարութեանց: Ազգային Առաջնորդարանի որոշումով 1988-ին եւ 1989-ին զանազան հանդիսութիւններ եւ ձեռնարկներ տեղի պիտի ունենան թէ Առաջնորդարանիս եւ թէ Պաղտատի մէջ գործող Հայկական Միութիւններու կողմէ, ինչպէս նաեւ Իրաքի հայաշատ կեդրոններու մէջ:

Հազուադէպ է երեք սարկաւագներու միաժամանակ քահանայական ձեռնադրութիւնը սփիւռքեան իրականութեան մէջ թեմական կեանքէն ներս: Նման եղելութիւն մը առաքելաբար յատուկ է վանքերուն:

Ներկայիս մեր եկեղեցիները յուզող հրատապ հարցերէն մին է հոգեւոր ասպարէզ ընդգրկուողներու նուազումը: Այս վիճակը դարմանելու մտադրութեամբ չորս տարիներ առաջ հաստատուած քահանայութեան թեկնածուներու դասարանը ահաւասիկ իր առաջին հունձքը տուաւ, երբ քառամեայ դասընթացքներու շրջանը աւարտող երեք սարկաւագներ՝ Անդրանիկ Արշակեան, Սիմոն Գաբրիէլեան եւ Ծորճ Ազիզեան քահանայ ձեռնադրուեցան:

Հինգշաբթի, 17 Նոյեմբերի երեկոյեան տեղի ունեցաւ, «Յերեկոյէ կոչումն քահանայութեան» կարգը՝ խարտուիլակութեամբ Արժ. Տ. Օշական Ա. Քհնյ. Գլըճեանի, որը վկայեց նորընծաներու հոգեւոր եւ իմացական կարողութեանց ու արժանիքներու մասին՝ հայցելով Առաջնորդ Սրբազան Հօր հաւանութիւնը զանոնք արժանացնելու քահանայական աստիճանին:

Նորընծաները խոստացան «յանձն առնուլ եւ կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն եւ հայրապետացն եւ կալ ըստ կանոնաց նոցա», «ամենայն պատրաստութեամբ եւ առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ» եւ պահել «զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ընդ սուրբ հայրապետսն ըստ երից սուրբ ժողովոց»: Յաւարտ քահանայական կոչման արարողութեան, նորընծաները հրապարակաւ արտասանեցին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ «Հաւատոյ խոստովանութիւն»-ը ըստ Ս. Գրիգոր Տաթեւացիի սահմանած բանաձեւին:

Քսան տարիներէ ի վեր ամէն ուրբաթ օր ժամերգութիւն եւ Ս. Պատարագ կը մատուցուի Իրաքի Հայ եկեղեցիներու մէջ՝ կիրակի օրուայ կողքին, քանի որ ուրբաթը շաբթուան արձակուրդի օրն է: Այս պատճառով քահանայական ձեռնադրութիւնը եւ օծումը կատարուեցաւ ուրբաթ 18 Նոյեմբերին: Արդէն վաղ առաւօտուընէ հոծ բազմութիւն մը փութացած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Իրաքի զանազան հայաշատ կեդրոններէն եւս բազմաթիւ հայ հաւատացեալներ ժամանած էին Պաղտատ: Ներկայ էին նաեւ քոյր եկեղեցիներու համայնքապետներ եւ բարձրաստիճան հոգեւորականներ՝

Քաղդէացւոց Պատրիարքը եւ իր օգնականը,

Նեստորական եկեղեցւոյ Պատրիարքը,

Ասորիներու Առաջնորդը.

Կաթողիկէ Սիրեան համայնքին Առաջնորդը:

Օրուայ պատարագիչն էր Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Տ. Աւագ Եպիսկոպոս Ասատուրեանը: Ս. Պատարագը շարունակուեցաւ մինչեւ «Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած» աղօթքը, ապա խարտաւիլակ քահանայ հայրը նորընծաները ծնկաչոք առաջնորդեց դէպի Ս. Սեղան ուր անոնք հաւատացեալ ժողովուրդին դառնալով, բարձրացուցին իրենց ձեռքերը ի նշան աշխարհէն հրաժարման:

սկսաւ երբ Գերաշնորհ Սրբազան Հայրը մէկ առ մէկ սրբալոյս միւռոնով օծեց իւրաքանչիւր նորընծայի ճակատն ու ձեռքերը զանոնք վերանուանելով

Անդրանիկ Սարկաւագ Արշակեանը—Տ. Գէորգ Քահանայ,

Սիմոն Սարկաւագ Գաբրիէլեանը—Տ. Մեսրոպ Քահանայ,

Մորճ Սարկաւագ Ազիզեանը—Տ. Վազգէն Քահանայ:

Քարոզի սկիզբը Սրբազան Հայրը յիշեց թէ սոյն քահանայական Ձեռնադրութեան բարեբաստ պարագան հաղորդած է Ամե-

Հրաժարում:

«Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականէն ետք Տ. Աւագ Եպիսկոպոսը դնելով «զաջն ի վերայ գլխոյն հուիրելոյն» իրաքանչիւրին շնորհեց քահանայական աստիճան:

Յուզիչ էր պահը ու հոգեպարար. բոլոր հաւատացեալները վերացած, ամենայն ջերմեռանդութեամբ կը հետեւէին Հայաստանեայց Մեր Մայրենի Եկեղեցւոյ դարաւոր արարողութեան, որ կատարուեցաւ հանդիսաւորութեամբ եւ ամենայն վայելչութեամբ:

Օծման խորհրդաւոր արարողութիւնը

նոյն Հայոց Հայրապետին:

Մասնակից դառնալով հաւատացեալ ժողովուրդի ուրախութեանց Նորին Ս. Օծութիւնը հետեւեալ հեռագրով փոխանցեց թեմիս իր հայրապետական հաճութիւնը—

ԱՒԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Հայոց Եկեղեցի, Պաղտատ—Իրաք

Սրտագին հրճուանքով ստացանք Ձեր հեռագիրը, որ կը տեղեկացնէ Մեզի երեք սարկաւագներու քահանայական ձեռնա-

դրութեան բարի լուրը Ձեր թեմի եկեղեցիներու վրայ որպէս հոգեւոր սպասաւորներ:

Սուրբ Էջմիածնէն ջերմապէս կը շնորհաւորենք Ձեզի եւ Մեր Հայրական օրհնութիւնները կ՚առաքենք նորոգ ձեռնադրեալ քահանայ հայրերուն: Թող Ամենակալն Աստուած հայրական սիրով ընդունի իրենց ծառայութեան ուխտը, զօրացնէ իրենց հոգիները սպասարկելու մեր Մայր Եկեղեցւոյ եւ Ձեր թեմի հաւատացեալ հայ ժողովուրդին՝ նուիրուածութեամբ եւ հաւատարմութեամբ:

Մեր բարի մաղթանքները եւ օրհնութիւնները նաեւ Թեմիդ Կեդրոնական Վարչութեան եւ համայն հաւատացեալ ժողովուրդին:

Օրհնութեամբ

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ապա Սրբազան Հայրը անդրադառնալով վերանուանումներուն մասին տուաւ հետեւեալ բացատրութիւնը:

«Տ. Գէորգ քահանայ—1638-ին Գէորգ Բնազարէթեան անունով Հայ թնդանօթաձիգ զօրավարին կատարած բացառիկ ծառայութեան համար իբրեւ վարձատրութիւն երկու տարածուն հողամասեր կը տրամադրուին Պաղտատի հայութեան: Մէկուն վրայ կը կառուցուի Ս. Աստուածածին եկեղեցին որը կը գործէ մինչեւ օրս, որպէս կարեւորագոյն ուխտավայրերէն մին Պաղտատ քաղաքին:

Անհաւասիկ ի յիշատակ այս քաջ հայորդիին Անդրանիկ Սարկաւագը վերանուանեցինք Տ. Գէորգ Քահանայ:

Տ. Մեսրոպ Քահանայ—Պաղտատեան հայութիւնը 19-րդ դարու կէսուն ունեցած է ժրաջան, գործունեայ եւ երիտասարդ Առաջնորդ մը յանձինս՝ Տ. Մեսրոպ ծ. Վրդ. Կոստանդնոպոլսեցիի: Իր Առաջնորդութեան շրջանին ապահովուած է հողամասը ուր 1852-ին կառուցուած է Ծօրճայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, այժմ խոնարհած: Սոյն եկեղեցին իր շրջակայ Առաջնորդարանով, երիցատուներով եւ դպրոցով եղած է ընդարձակ կալուած մը եւ կարեւոր դեր կատարած է մանաւանդ թրքական եւ պարսկական մազապուրծ տարագիր հայութեան կեանքին մէջ: Այսօր սոյն կալուածին վրայ Ազգային Իշխանութիւնը արդիական չորս յարկանի ընդարձակ շուկայ մը կառուցանեց, որը պատկառելի հասոյթ մը պիտի ապահովէ Ազգային Սնտուկին: Մեսրոպ Հայր Սուրբը նաեւ կառուցած է Մուսուլի Ս. Էջմիածին եկեղեցին:

Տ. Մեսրոպ ծ. Վարդապետը 17 տարեկան երիտասարդ հասակին վախճանած է 1864-ին եւ թաղուած Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ շրջաբակին մէջ: Ահա այս երիտասարդ Առաջնորդի յիշատակին Սիմոն Սարկաւագը վերանուանեցինք Տ. Մեսրոպ Քահանայ:

Տ. Վազգէն Քահանայ—1988 թուականը կը զուգադիպի Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Իրաք տուած այցելութեան 10-րդ տարեդարձին, ինչպէս նաեւ Վեհին ծննդեան 80-րդ, քահանայական ձեռնադրութեան 45-րդ եւ Հայրապետական գահակալութեան 33-րդ տարեդարձներուն: Առ ի ոգեկոչում սոյն յիշարժան առիթներուն Ծորճ Սարկաւագը վերանուանեցինք Տ. Վազգէն Քահանայ»:

Պատարագը լրանալէն ետք հաւատացեալները մօտենալով նորընծաներուն համբուրեցին նորօծ աջերը եւ ստացան անոնց օրհնութիւնները:

Պաղտատահայութիւնը անմոռանալի ու աննախընթաց օր մը ապրեցաւ, որը պիտի յիշուի երկար ժամանակ որպէս օր յաղթանակի:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ





ՖԻԼԱՐԵՏ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Միտրոպոլիտ Ֆիլարետը և Ոսկան եպս. Գալուստքյանը Դամասկոսի հայոց Առաջնորդարանում

1988 թվականի նոյեմբերի 14-ին, երկուշաբթի օրը, Դամասկոսի հայոց Ս. Սարգիս եկեղեցի և Ազգային Առաջնորդարան այցելեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ Ֆիլարետ միտրոպոլիտը՝ իր շքախմբի հետ:

Բարձրաստիճան հյուրը արժանավայել կերպով դիմավորվեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ոսկան եպիսկոպոս Գալփաքյանի կողմե: Եկեղեցում գերաշնորհ սրբազան հայրը ողջունեց միտրոպոլիտ Ֆիլարետին՝ բարի գալուստ մաղթելով աստվածաշնչական Դամասկոս քաղաք և հատկապես հայոց Ս. Սարգիս եկեղեցի, որ գտնվում է աստվածաշնչա-

կան ՈՒՂԻՂ փողոցի վրա, որտեղից Պողոս առաքյալ առաջին անգամ սկսեց իր առաքելական քարոզությունը: Ապա սրբազան հայրը խոսեց ընականոն է սիրալիր այն սերտ հարաբերության մասին, որ գոյություն ունի Հայց. Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև Դամասկոսում և համարեց օրինաչափական հետևանքը այն սիրալիր հարաբերությանց, որ գոյություն ունեն Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի և Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի միջև: Սրբազան հայրը իր խոսքը ավարտեց բարեմաղթություններով՝ ուղղված Ռուս Եկեղեցուն, ռուս ժողովրդին և անձնապես միտրոպոլիտ Ֆիլարետին:

Միտրոպոլիտ Ֆիլարետը իր պատասխան խոսքում հայտնեց իր շնորհակալությունը և շեշտեց սիրալիր եղբայրական ջերմ հարաբերությանց մասին, որ գոյություն ունեն Սովետական Միության մեջ Հայց. Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև՝ ավելացնելով, որ ամեն տեսակի ուրախություն Հայց. Եկեղեցու և ժողովրդի համար հավասարապես ուրախություն է Ռուս Եկեղեցու համար և ամեն տեսակի տխուր երևույթ տխրություն է Ռուս Եկեղեցու և ժողովրդի համար:

Միտրոպոլիտ սրբազան հայրը շնորհակալություն հայտնեց առաջնորդ սրբազան հոր՝ իր ջերմ ընդունելության համար:

Ապա Առաջնորդարանի դահլիճին մեջ տեղի ունեցավ հյուրասիրություն ի պատիվ միտրոպոլիտ Ֆիլարետի և իր պատվիրակության:

ԹՂԹԱԿԻՑ



ՀԱՎԵՐԺ ԵՐԱԽՏԱՎՈՐԻՆ

Ես ուխտավոր Օշականի սուրբ Մեսրոպի գերեզմանին,
Երախտագետ սրտով խոնարհ՝ վերհիշելով եմ ես քայլում
Ոտաբոբիկ, փուշ ու տատասկ, խիճեր և խութ անտեսելով,
Իբր ուխտավոր հուղարկավոր քայլում եմ ես հին ճամփեքով:

Վերհիշում եմ այն օրերի վիշտն անամոք, կսկիծը խոր,
Երբ քեզ տարան Ամատունյաց գյուղն Օշական՝ հողին տալու,
Այն օրերին երկինքն հայոց մթագնել էր սև ամպերով,
Միակ լույսը՝ հույսի խորհուրդ քեզ հովանի խաչն էր երկնի:

Այրարատյան լայնարձակ դաշտն ամայացել, դալկացել էր,
Ձմռան ինչքով քնել էին ծառեր ու թուփ, դաշտ ու ձորեր,
Ճամփի եզրին, շեների մոտ հավատավոր հայորդիներ
Վերջին հարգանքն էին տալիս՝ խոնարհ գլխով հուղարկավոր:

Եվ թափորի շարքը սրագ, ալիք-ալիք խտանում էր.
Թափորապետ Հայրապետի շուրջ բոլորված վանականներ,
Աղու ձայնով երգում էին քո իսկ գրած շարականներ,
Սգո մուսյան էր տարածում թևերը իր սրտերում խոր:

Ո՞վ իմանար, Հացեկացի, քո գնալով՝ գալիս էիր,
Տվել էիր մեզ մի զրահ հաղթահարող ահը չարի,
Նենգ թշնամու դեմ համառող, քաղաքակիրթ ազգաց շարքում
Մեզ հաստատող, մեզ սնուցող, կյանք պարգևող այս աշխարհում:

Գունդ-գունդ եկել խմբվել էին ահել-ջահել երկու սեռից,
Շրջապատել հազարապետ Ամատունի իշխանն հայոց,
Նրա կողքին մատուցելու հարգանքն վերջին մեծ ուսուցչին՝
Դարե ի դար մեզ սնուցող ժողովրդի անմահ զավկին:

Տարոն գավառ, գ:ուղ Հացեկաց և մի խրճիթ, հայրը՝ Վարդան,
Փոքր Հայքի լեռների մեջ ոերրի հովտաց դու ոալասան,
Ծնվեցիր հեզ զերթ շինական, հոգով՝ վսեմ, ազնվական,
Ուսումնական բարձունք հասար, դարձար խոհեմ զինվորական:

Արշակունյաց գահն էր ընկել, աշխարհն հայոց բաժանվել էր
Երկու մասի, ընդմեջ հզոր պարսիկի ե Բյուզանդիայի,
Երկիրը մեր գերի դարձել, ստրկացել զույգ ազգերին,
Եղել, ավա՜ղ, կովախնձոր անտիրական և անիշխան:

Համոզվեցիր կյանքի փորձով, որ զենքը չէ հույսը հայի,
Թագավորին իբր քարտուղար ճանաչեցիր վիճակն ազգի,
Որ հայն ապրի պիտի միայն թշնամյաց մեջ նենգ, տիրական,
Մշակույթովն իր սեփական միության իր իբրև խորան:

Լքելով զենքն ու համազգեստն զինվորական, դու ընտրեցիր
Սև պարեգոտն ու կնքուղը վանականի և մերժեցիր՝
Կյանքի շպար ճոխությունն ու հաճույքները անցողական,
Նվիրվեցիր ողջ էությամբ մեծ տեսիլքին հավերժական:

Ողջ աշխարհում թափառեցիր, աղոթելով դու երկնեցիր,
Գիշերներդ լուսացրիր, շնորհի լույսդ բազմացրիր,
Գիրը բերիր դու Դանիելի հայոց լեզվի հնչման համար,
Թերի գտար, ստեղծագործ կամքով կրկին դու ճգնեցիր:

Աստղերի մեջ որոնեցիր գիսավորներ հրաշալի,
Մեն մի շեշտին, մեն մի ձայնին դու ձև տվիր զարմանալի,
Աստղերն երկնից երկիր բերիր, լուսապսակ դու կազմեցիր,
Դրիր ճակտին քո իսկ ազգի ե քո փառքով պսակեցիր:

Հրաշքն արդեն կատարվել էր, հավատն արդեն ընձյուղ տվել,
Տարիների տենչդ ահա դարձել էր գիր, դարձել հնչյուն,
Դարձել էր շեշտ ու այբուբեն, մեր կարավանն առաջնորդող
Սյուն լուսեղեն, ամպ լուսավոր, գիշերը մեր ցերեկ դարձնող:

Փառքով եկար դու Հայրենիք՝ հայոց աշխարհն Այրարատյան,
Իջար փառքով դու երկնքից, զերթ մանանա ամենահաս,
Քո լծակցի՝ սուրբ Սահակի հետ հիմնեցիր նոր Ծեմարան,
Հպար քիմքին սերունդների անմահության գինով բուրյան:

Երկփեղկված Հայաստանում նորոգ կյանքի շունչը փչեց,
Ձմեռն անցավ, հուսալքված սիրտը հայի զարթնեց քնից,
Փառքը գյուտի սփռվել էր ողջ տարածքով մեր աշխարհի,
Վերանորոգ կյանքն էր լցվել աշխարհաշեն նոր տեսիլքի:

Բացվել էին ամենուրեք վարժարան ու դպրանոցներ,
Եվ սերունդներն եկել էին հագենալու առանց խտիր,
Այն օրվանից մեր մայրենին՝ լքված, անզոր ու անպաշտպան,
Դարձել ջահել, քնքշանքով լի հարսն երկնատուր հայ գրերի:

Երևավառ հողն հայրենի, սխրանքների առնչած օրրան,
Գյուտի փառքով վերածնվեց, իր վրայից նա թոթափեց,
Խավարն իբրև մաշված զգեստ, հագավ կյանքի նոր պատմուճան,
Նոր շողերով պճնազարդվեց, հավերժության ուղին հարթեց:

Մեր դպրության վարդապետներն՝ Եզնիկ, Հովսեփ և Եղիշե,
Մովսես Քերթող, Անհաղթ Դավիթ փիլիսոփա և շատ շատեր
Եռամեծի շուրջն հավաքված՝ սկիզբ դրին թարգմանության՝
Կյանքի մատյան, կյանքի տվիչ Աստվածաշունչ Բանին անմահ:

Աստվածաշունչ գրքի կողքին փութանակի թարգմանեցին
Բազում գրքեր իմաստության վարդապետաց աստվածաբան,
Եվ ուսուցին, սերմանեցին, լուսե անձրև երկնից բերին,
Հայկյան զարմի որդիների մտքերն լույսով ողողեցին:

Առաքելոց արյամբ ցողված Եկեղեցին Հայաստանյայց
Լուսավորչի հավերժական տեսիլքով էր լուսակերտված.
Գիտության լույսն առատացավ, երբ Մաշտոցի շունչը դիպավ,
Եկեղեցու սուրբ խորանի ջահն առավել պայծառացավ:

Դարեր անցան, ձիգ ու դժվար, տխուր ու մութ դարեր ցավի,
Աշխարհն հայոց քանի՞ անգամ դարձավ կրկես մութ ուժերի,
Ջարմանում եմ քո տաղանդին և քո գյուտի խոր արժեքին,
Հիանում եմ գյուտի փառքը կերտող հային՝ սուրբ Մեսրոպին:

Քո իսկ կերտած գիրը պահեց ազգը հայոց մեր հայկազյան,
Գիրը պահեց հավատը մեր ինքնությունը մեր անսասան,
Գիրը վերցրեց, մեզ բարձրացրեց, դարձրեց հասու իմաստության,
Գրով կնքվեց անունը քո անջնջելի մեջ պատմության:

Ո՛վ վարդապետ, քո տեսիլքի արգասիքով՝ այբուբենով,
Դու փրկեցիր ազգը հայոց հար ուծացման վտանգներից,
Փառքն անցյալի ճանաչելու, ինքնակերտման ճամփա բացիր,
Մեզ ուսուցիր սիրել վսեմն ու կատարյալն առանց խտիր:

Ո՛վ եռամեծ մեր վարդապետ, սրբագույնդ հայ սրբերի,
Ասա՛, խնդրեմ, գյո՞ւտն էր հրաշք քո ստեղծած հայ գրերի,
Թե՞ տեսիլքը գյուտի ճամփով հայոց ազգի հավերժացման,
Ո՛վ ուսուցիչ իմաստնագույն, խորագետ ու հավերժական:

Ես՝ այցելու և ուխտավոր Օշականի գերեզմանին,
Հետևում եմ վերջին երթիդ: Սգավոր չեմ, հայր իմ անգին,
Վերհիշելով անցյալը մեր՝ քայլում եմ ես մտամոլոր,
Փառքիդ լույսով պայծառացած երախտավոր մի ուխտավոր:

Ծաղկել են, արդ, ճամփաները նվիրական Օշականի,
Ճովողում են քո գրերով որդիներդ Հայաստանի,
Ե՛կ վերստին, փա՛ռքդ հայոց, մեր լեռներից հուշիկ իջիր,
Լույսերի ծով մեր աշխարհում օրհնաձիր Աջըդ տարածիր:

Նախճիրն անցավ մեր երեկվա, եկան կյանքի ծաղկուն օրեր,
Շատ կռունկներ վերադարձան, վերագտան իրենց բույներ,
Խինդով լցվեց երկիրն հայոց, խոխոջն ուսվի օդը լցրեց,
Խաղաղության ձայնը հնչեց, աշխատանքով կյանքը զուգվեց։

Ո՛վ առաքյալ երկնապսուրգև, անզուգական մեր առաջնորդ,
Դու հայ հողից ծնված ընծա, ծառս լիառատ և պտղառատ,
Դու՝ խտացումն հայ հանճարի լուսարձակ մի՛տք դարերի մեջ,
Դու՝ զարդարուն շնորհներով աստվածատուր մեծ ուսուցիչ։

Որքան ձգվեն դարերն երկար, մեծանում ես, պայծառանում,
Վեհանում ես, իմաստնանում, որքան միտքն է մեր զարգանում,
Դու լույս էիր խավարի մեջ, և լույսը քո պայծառացավ,
Դարե ի դար շքեղացավ, անհաս փառքի արև դարձավ։

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ



ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԹՈՒՐՔԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Շրջանը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմտյան կողմում: Այն զբաղեցնում է գլխավորապես Կուր գետի ափամերձ հարթավայրերը աջ ու ձախ կողմերից և Ջակամ գետի ավազանը: Սահմանակից է Ղազախի, Ծամխորի, Կեղաբեկի, Ծամշադինի, Ծիթելի-Ծղարոյի շրջաններին: Հարթավայրային այլ շրջանների նման, սա ևս զուրկ է բնական պաշտպանական միջոցներից, այդ պատճառով էլ հետզհետե զրկվել է տեղի հայ բնակչությունից: Ուշ միջնադարում շրջանի հիմնական տարածքը զբաղեցնում էին թուրքական թափառական անասնապահ ցեղերը: Հայերը քաշվել ու ամրացել էին շրջանի հարավային լեռնոտ մասերում՝ Լոռարակ, Զաթախ և այլ գյուղերում: Հարթավայրային մասում միակ հայաբնակ գյուղը, որը հաջողությամբ դիմագրավեց դաժան փորձություններին, Կրոզենն էր: Շրջանի ներկայիս տարածքը միջնադարում բաղկացած էր Տավուշ, Շակաշեն և Միափոր գավառներից: Նշանավոր էին Խաղխաղ քաղաքը, Քարահերձ բերդը...

ԱՂԱՃ-ՂԱԼԱ. Ադրբեջանական փոքրիկ գյուղ է Պատիշենից 10 կմ արևմուտք, գեղատեսիլ վայրում: Գյուղի արևմտյան կողմում, բարձր լեռան գագաթին, պահպանվում են Շահ-փեքար կամ Աղաճ-ղալա (փայտե բերդ) դղյակ-ամրոցի ավերակները: Պարսպապատ են գլխավորապես բերդի հյուսիսային և արևելյան մասերը:

Բերդից ոչ շատ հեռու պահպանված է մի ավերակ մատուռ, իսկ արևմտյան կողմում, գետակի ձախ ափի բարձրադիր տափարակին՝ կանգուն փոքրիկ վանք, շուրջը գերեզմանոցի և գյուղատեղի ավերակներ են (Աղաճ-ղալայից 6 կմ արևմուտք): Եկեղեցին միանավ թաղածածկ բազիլիկ կառույց է (արտաքին չափերը՝ 9,30×7,00 մ), որի երկթեք ծածկի տակ առնված տանիքը պահում է մեկ զույգ որմնասյուների վրա հենված թաղակիր կամարը: Միակ մուտքը արևմտյան ճակատում է: Արևելյան կողմում Ավագ խորանն է, որի աջ ու ձախ կողմերում պահպանվել են կրկնակ ավանդատներ: Եկեղեցու դեպի ներս լայնացող լուսամուտները վեցն են (3-ը արևելյան, մեկական՝ մնացած երեք ճակատներից): Եկեղեցին ամբողջապես կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարերով, կրաշաղախով: Սրբատաշ է ակյունաքարերի մեծ մասը: Պատերում ագուցված են բազմաթիվ պարզ ու հնաոճ խաչաքանդակներով զարդարված անարձանագիր կոթողխաչքարեր: Դրանց մեծ մասն ունի սովորականից ավելի ձգված ու երկարավուն ձև: Մի քանի հնաոճ, ավելի կանոնավոր խաչքարեր ագուցված են եկեղեցու ներսում, ավանդատների մուտքերից վեր: Արձանագրություններ չեն պահպանվել: Ըստ ոճական, ճարտարապետական առանձնահատկությունների՝ եկեղեցին կարելի է թվագրել 10—11-րդ դդ.:

Բավական ընդարձակ գերեզմանոց և գյուղատեղ է պահպանվել նաև գետակի աջ ափին, բերդի ստորոտում:

ԼՂԱՐԱԿ. Գյուղ է եղել Զակամ գետի ափին: Ճշգրիտ տեղադրությունն անհայտ է: Հիշատակվում է 1620 թվականին ոմն Հակոբ երեցի ձեռքով գրված մի «Աւետարանի» հիշատակարանում՝ իբրև գրչօջախ. «...ի ծորս Զակամայ, ի գիւղս որ կոչի Լըղարակ»[2]:

ԽԱՂԽԱՂ. Ուտիք նահանգի հնագույն բնակավայրերից էր: Ճշգրիտ տեղադրությունն առայժմ անհայտ է: Հետազոտողները, հենվելով մատենագրական աղբյուրների վրա, այն տեղորոշում են Կուրի աջ ափին, Խալխալ գյուղի տեղում[3] կամ Զակամ գետի ստորին հոսանքի շրջանում[4]:

Խաղխաղը հիշատակվում է և՛ իբրև քաղաք, և՛ իբրև գյուղ: Այն հայ Արշակունի թագավորների արքայական ձմեռանոցն էր. «Ուտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերանոցն արքայութեանն Հայոց»[5], կամ, «...մերձ ի սահմանս Վրաց հանդեպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից»[6], կամ «...ի գեօղն, որ կոչի Խաղխաղ, յերկրին Աղուանից»[7]: Հիշատակություններ կան նաև օտար աղբյուրներում. «Եվ եկավ Հայքի (Սոմխիթի) սահմանները Խաղխաղ (Խիլխալա) կոչված քաղաքը, որ հայոց (սոմեխների) թագավորների ձմերանոցն էր»[8]:

Հայտնի է, որ 450 թվականին հայոց ապըստամբ զորքերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ պարսից գերակշռող զորքերին հաղթական ճակատամարտ են տվել հենց Խաղխաղի մոտ, իսկ փախուստի մատնված հակառակորդի զգալի մասը նահանջի տեղ չունենալով խեղդամահ են եղել Կուր գետում[9]:

ԿՈՋԵՆ. Շրջանի միակ հայաբնակ գյուղը գտնվում է շրջկենտրոնից 18 կմ հյուսիս-արևելք, Կուր գետի աջ ափից մոտ 2—3 կմ հեռավորության վրա: Հնում գյուղը ունեցել է մոտ 700 տուն[10] և գտնվել է ներկայիս տեղից 2 կմ հյուսիս, Կուր գետի աջ ափին: Բնակիչները նոր գյուղը հիմնել են 20-րդ դարի սկզբներին: 1905 թ. Կոզենի եղերական դեպքերից հետո[11] հրաշքով փրկված համագյուղացիները այլևս նպատակահարմար չգտնելով բնակվել հիմնավեր գյուղում, երկու կիլոմետր հարավ, հարթ տեղանքում հիմնադրել են համանուն նոր գյուղը: Հին գյուղատեղի տարածքում կատարվել են ծառատնկումներ: Ցուրացված հողատարածությունը ամբողջովին մաքրվել է հնությունների մնացորդներից: Միակ պահպանված հուշարձանը հին գյուղի գերեզմանոցն է, որի հյուսիս-արևելյան ծայրում թաղումները այժմ էլ շարունակվում են: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կոզեն գյուղի վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել, նշված գերեզմանոցում պահպանված տապանագրերը առանձնակի կարևորություն ու արժեք ունեն գյուղի պատմության ամբողջական ուսումնասիրության առումով: Տեղում պահպանվել են 17-րդ դարին վերաբերող 2 խաչքար և 50-ից ավելի տապանաքար: Մնացած գերեզմանաքարերը վերաբերում են 19—20-րդ դարերին: Կոզենի գերեզմանոցի վիմագրերը դեռևս չեն ուսումնասիրված: Ստորև ներկայացնում ենք այդ գերեզմանոցից հավաքած շուրջ 40 արձանագրություն (մեկը խաչքարի վրայից, մնացածը՝ տապանաքարերից), որոնք բոլորն էլ հրատարակվում են առաջին անգամ[12]:

Ա. ԹՎԻՆ ՌՃԻԱ (1672) /Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱՐԷԽԱ[Ի]Ս Է ՀԱԼԱՊ/ԷՑԻ ԽԱՀՃԱՑ ԱԻԴՈՒԼՔԱՐԻՄԻՆ:

Բ. ԹՎ[ԻՆ] ՌՃԺ (1661) /ԵՍ ՍԱՐԳԻՍ ԿԱ/ԶՄԵԼ ՏԱԻ ՏԱ/ՊԱՆ.../ ...ԿՈՂԱԿ-ՑԻ/Ն ԻՄՈՑ [ԽԱ]Թ/[ՈՒ]ՆԻՆ:

Գ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱՐԷԽԱ[Ի]Ս Է ՅՈՀԱՆԷՍԻՆ /ԹՎ[ԻՆ] ՌՂԸ (1649):

Դ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ Բ/Ա[ՐԷ]Խ[ԱԻՍ] Է ԹԱ/ՃՈՒՄԻՆ:

Ե. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱ/[Ր]ԷԽԱ[Ի]Ս Է:

Զ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս /[Բ]ԱՐԷԽԱ[Ի]Ս /[Է] ՎԱՆԱԿ/ԱՆԻՆ:

Է. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս [Բ]Ա/[Ր]Է-ԽԱ[Ի]Ս Է: [ԿԱ]ԶՄՈՂ ԽԱԶԱՏՈՒ[Ր][13]:

Ը. Ս[ՈՒՐ]Բ Խ/ԱԶՍ Բ/ԱՐ[Է]ԽԱԻ/Ս Է ԻՁԻ/ՊԷԿԻ ՀՈ/ԳՈՒՆ...:

Թ. ԹՎ[ԻՆ] ՌՃԲ (1653), /Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]ԶՍ Բ[Ա]Ր[Է]Խ[ԱԻ]Ս Է ԹԱՄԱ-ՄԻՆ՝ ԿՈՂ/ԱԿՑԻՆ ԱՆՏՈՆԻՆ: /ԿԱԶ-Մ[Ո]Ղ ՈՒՆԱՆ[14]:

Ժ. ԹՎ[ԻՆ] ՌՂԸ (1649) /Ս[ՈՒՐ]Բ ԽԱ-ԶԸՍ ԲԱՐԷԽ[ԱԻ]Ս Է ԳՈՀԱՐ/ԻՆ, ՀՐԱՑ-ՊԷՏԻՆ:

ԺԱ. Ս[ՈՒՐ]Բ [Խ]ԱԶՍ ԲԱ/[Ր]Է]ԽԱԻՍ Է ՍԱՄ/...:

ԺԲ. Ս[ՈՒՐ]Բ [Խ]ԱԶՍ/ [ԲԱ]ՐԷ-ԽԱ[Ի]ՍԷՍ/ ՍՈՒ[Լ]Թ/ԱՆ ԲԱԲԻՆ /ՈՐ ՄԷԼ[Ի]Ջ Է/Ր ԹԱՍՈՒ/ՋԻՆ ՋՈՐԻՆ[15]:

ԺԳ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐ[Է]Խ[ԱԻ]Ս Է [Զ]ԻՍԻ/ԿԻՆ, ԹԻ/Ի ՈՀԴ (1625):

ԺԴ. Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]ԶՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է ՄԷԼԻՋԻՆ: Թ[ՎԻՆ] ՌՋԷ (1638):

ԺԵ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶ/Ս ԲԱՐԵԽ[ԱԻՍ] Է /ԱՌԱՋ/ԷԼ[ԻՆ], ԹԻԻ/ ՈՀԳ (1624):

ԺԶ. ...ՆԻՆ Թ[ՎԻՆ] / ՈՀԴ (1625):

ԺԷ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱ[Ր]ԷԽԱ[Ի]Ս Է ՂԱՍՈՒՄԻՆ, ՓԱՐՈՒՆ..., /ՀԷՂԻՆԻՆ

.../ԱՅՇԱՆԻՆ/ ԹՎ[ԻՆ] ՌՂԸ (1649), ...ԱՅՊԵՏԻՆ/ ՁԱԽԱՆԻՁԸ:

ԺԸ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս Է / [ԲԱՐ]Է-ԽԱ[Ի]Ս Է/ ՅՈՀԱ/ՆԷՍԻ/Ն, ՈՍՊԷՏ, ԹԸ-Վ[ԻՆ] ՌՂԳ (1644):

Խ[Ա]ՁՍ [ԲԱ]Ր[Է]Խ[ԱԻ]Ս Է ԹԱՌԱ-ՆԻՆ:

ԻԸ. ԹՎ[ԻՆ] ՌՇԱ (1652), Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]ՁՍ [ԲԱ]Ր[Է]Խ[ԱԻ]Ս Է ՂԱՋԱՐԻՆ ԿՈՂԱ/ԿՑԻՆ ՀՈՒՄԻՇԱՆ[ԻՆ]: Կ[Ա]Ջ-



Տապանաքար հին գերեզմանոցում (Կոզևն գյուղ)

ԺԹ. ...[ԿՈՂԱ]ԿԻՑ ԲԻԲԻԿ...:

Ի. ...ՀՈՒՌՈՒՄԻՆ/ Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱ[Ր]ԷԽԱ[Ի]Ս Է ՅՈՒՍԷՓ, /ԹՎ[ԻՆ] ՌՂԹ (1650), Կ(Ա)ՋՄ[Ո]Ղ ՈՒՆԱՆ: Միակ արձանագիր խաչքարն է:

ԻԱ. ԹՎ[ԻՆ] ՌՂԳ (1644) ԻՆ: ՌՈՒ-ՄՈՀՈ/Կ[Ո]Ղ[Ա]Կ[Ի]Ց ԷՔԻՆ/ ՅՈՒՍ:

ԻԲ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱ/[Ր]Է-ԽԱ[Ի]Ս Է: [Կ]ԱՋՄՈՂ ԽԱՉԱՏՈՒ[Ր]:

ԻԳ. ԹՎ[ԻՆ] ՌԿԹ (1620) /Է[Ր]: ՆԱՐ-ԿԻՋ /[Խ]ԱՁՍ ԲԱՐԵԽ[ԱԻՍ]/ ԽԱՉԱ-ՏՈՒՐՍ/ ԿԱՋՄՈՂ:

ԻԴ. ԹՎ[ԻՆ] ՌԿԹ (1620) .../ԷՑԵՄԿՍ... /Ս[ՈՒՐ]Բ ԽԱՁՍ ԲԱՐԵԽ[ԱԻՍ]/ [ԽԱ-Զ]ԱՏՈՒՐ.../ ԿԱՋՄՈՂՍ:

ԻԵ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱ[Ր]Է-ԽԱ[Ի]Ս Է/ ԽԱՆԱ/ՊԱ[ԻՆ]...:

ԻԶ. ԿԱՋՄՈՂ ԽԱՉԱՏՈՒ[Ր]:

ԻԷ. ԹՎ[ԻՆ] ՌՇԱ (1652)/ Ս[ՈՒՐ]Բ Մ[Ո]Ղ ՈՒՆԱՆ:

ԻԹ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՁՍ ԲԱՐԷԽ/ԱԻՍ Է ՍՄԲԱՏԻՆ:

Լ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՁՍ ԲԱՐԷԽԱԻ[Ս] Է ՄԻՐԱՆԻՆ: ԹՎ[ԻՆ] ՌԿԷ (1618):

ԼԱ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Զ]Ս ԲԱՐԷ/ԽԱ[Ի]Ս Է ՇԻՒԱ/ՆՇԱՅԻ: Թ[ՎԻՆ] ՌՇԱ (1652): ԿԱՋՄՈՂ ԽԱՉԱՏՈՒ[Ր]:

ԼԲ. ԱՄԻՐ[ԻՆ]:

ԼԳ. Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]ՁՍ Բ]Ա[Ր[Է]-Խ[ԱԻ]Ս Է ՎԱՆԻԿԻՆ, ԿԱՋՄՈՂ ՅՈՒ-ՆԱՆ:

ԼԴ. ...ՄԱՄԽԱ/ԹՈՒՆՍ ԿԱՄՕ[Ջ]Ն ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Ց Կ[Ա]ՆԳՆ[Ե]ՑԻ Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]ՁՍ Բ[Ա]ՐԷԽՕՍ ԱՄԻ/Ր-ՇԱՆ..., ԹՎ[ԻՆ] ՌԿ (1611):

ԼԵ. ...ԹՎ[ԻՆ] ՌԿԷ (1618) [Խ]ԱՉԱՑ-ՏԻ[Ր] /ԿԱՋՄ[Ո]ՂԻ: Ս[ՈՒՐ]Բ ԽԱՁՍ ԲԱՐԷԽԱ[Ի]Ս Է ...ՍԱԹԻՆ:

ԼԶ. Թ[ՎԻՆ] ՌԾ (1651):
ԼԷ. Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]Չ Ս ԲԱՐԷԽԱԻՍ Է ՊԷԿՈ[Ի]Մ[ԻՆ]: ՅՈ[Հ]ԱՆ, ԹՈԹԻԿ:
ԼԸ. Ս[ՈՒՐ]Բ Խ[Ա]Չ Ս ԲԱՐԷԽԱԻՍ Է/... ԹՎ[ԻՆ] ՌՂԱ (1642):

ընդարձակ գյուղատեղի և գերեզմանոցի ավերակները (այդ թվում՝ արձանագիր գերեզմանաքարեր):

Բ. **Ղազանչի գյուղատեղ**, գտնվում է Քահանայի գյուղից արևելք: Պահպանվել են



Տապանաքար հին գերեզմանոցում (Կոզեն գյուղ)

ԼԹ. ԿԱՋ[ՄՈ]Ղ [ԽԱ]Չ[Ա]Յ/ՏՈ[Ի]Ր ԹՎ[ԻՆ] ՌԾ (1651): /ԱՅՍ Է ՀԱՆԳ/ԻՍՏ .../...ԹԱՆԻՆ:
Խ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱ[Չ]Ս [ԲԱՐ]ԷԽԱ[Ի]Ս Է ՍՈՒԱՐ/ԻՆ ԿՈ[ՂԱԿՑԻՆ...:

Գերեզմանոցից շատ հեռու չէ «Զատկի ծառ» սրբատեղին, որը մի հսկա փոշնի ծառ է: Կոզեն գյուղի տարածքում պահպանվել են նաև մեկ այլ գյուղատեղի, գերեզմանոցի ու հիմնավեր եկեղեցու մնացորդներ:

Թոռուզի շրջանում պահպանվել են նաև հետևյալ հուշարձանները:

* * *

Ա. **Քահանայի գյուղ (Քեշիշքենդ)**, ադրբեջանաբնակ գյուղ է, ուր պահպանվել են ավերակ գյուղատեղի, գերեզմանոցի և եկեղեցու մնացորդները:

Գ. **Երկու դղյակ-ամրոցներ**, մեկը Ղազանչի գյուղատեղի արևելյան, մյուսը՝ հյուսիսային կողմում:

Դ. **Սուրբ Ղազար**, գտնվում է Աղաճ-ղալայից հյուսիս-արևմուտք, սարի գագաթին: Պահպանվել է երեք գերեզման:

Ե. **Ավերակ եկեղեցի**, գտնվում է ադրբեջանաբնակ Քյոխանաբի գյուղի տարածքում, Խորանաշատ վանքից արևելք:

Զ. **Կամուրջ**, գտնվում է Յանիսի գյուղի մոտ, Զակամ գետի վրա: Պահպանվել են միաթռիչք կամրջի միայն խեյերը՝ գետի երկու ափերին: Կամրջի հիմքի մասերը կառուցված են սրբատաշ բազալտ քարից, իսկ մնացած մասերը՝ աղյուսից: 12—13-րդ դարերի հուշարձան է:

Է. Հնաբերդ, կիսավեր ամրոց է, գտնվում է ադրբեջանաբնակ Քյոհնակալա գրողի մոտ:

Ը. Զաթախ, այժմ ադրբեջանաբնակ գյուղ է: Գտնվում է շրջկենտրոնից հարավ, Արծվաշեն գյուղից մոտ 12 կմ հյուսիս: Իբրև հայաբնակ գյուղ, հիշատակվում է 1610 թվականին, երբ վերջինիս բնակչությունը գաղթել է Մեծ Ղարամուրատ. «...Զաթախ գեղն թողան, Մեծ Ղարամուրատն դարձան, Ներքին շէնքն մընաց ունայն»[16]:

Թ. Ներքին շեն, գյուղատեղ Զաթախի մոտերքում (գուցե Զաթախի մի թաղամասը էր), հիշատակվում է 1610 թվականին[7]:

Ժ. Ավետարան, ուխտատեղի է Կոզեն գյուղի տարածքում:

ԺԱ. Հողաբերդ (Թոփրաղ կալա), ավերակ բերդ է: Գտնվում է Կոզեն գյուղից 1 կմ հյուսիս-արևելք, Կուր գետի աջ կողմում:

ԺԲ. Վահրամ իշխանի բերդ (Ղալաբոյուն), գտնվում է Զակամ գետի ձախ կողմում, Ղալաբոյուն ադրբեջանաբնակ գյուղի մոտ: Պահպանվում են երեք եկեղեցիների, գերեզմանոցի և բազմաթիվ այլ շինությունների մնացորդները (գուցե սա է Քարահերձ բերդը, որը բազմիցս հիշատակվում է մատենագրության մեջ, մոնղոլական արշավանքների կապակցությամբ):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ոսկեան Հ., Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 4: «Արցախ», էջ 58:

2 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հատոր Ա, կազմեցին՝ Վագգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 725—726, այսուհետև՝ «ԺԷԱ»: Տե՛ս նաև «Ցուցակ Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Բ, Երևան, 1970, ձեռագիր № 6669:

8 Բարխուտարեանց Մ., «Արցախ», Բագու, 1895, էջ 57—58: 19-րդ դարի վերջին նկատելի էին ընդարձակ բնակատեղիի մնացորդները:

4 Ոզուբարյան Բ., Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 115:

5 Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 26:

6 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 65 (այսուհետև՝ Փարպեցի):

7 «Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, էջ 75:

8 «Վրաց Աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-Բեկ, հտ. Ա, Երևան, 1934, էջ 168 (այսուհետև՝ Վրաց Աղբյուրներ, Ա):

9 Փարպեցի, էջ 66: Տե՛ս նաև՝ Միքայել Չամչյանց, Հայոց Պատմություն, հտ. Բ, (վերահրատարակություն 200-ամյա հոբելյանի առթիվ) Երևան, 1984, էջ 57:

10 Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 59: Կոզենը 1890-ական թվականների սկզբներին ուներ 90 տուն (170 մարդ) հայ բնակչություն («Արցախ» էջ 59), 1914 թ. հունվարի 1-ին՝ 111 մարդ (բոլորն էլ հայեր. Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, էջ 142), 1961 թ. ուներ 50 տուն հայ և 80 տուն ադրբեջանցի բնակչություն (Ռ. Բաղրամյան, Կոզենի բարրառը, Երևան, 1961):

11 Տե՛ս Քաջբերունու «Կոզեն գյուղի ավերումը» հոդվածաշարքը («Արարատ», 1911, №№ Ժ, ԺԱ, ԺԲ, 1912, № Ա):

12 Գերեզմանաքարերը մոտ են մեկը մյուսին և գրաղեցնում են ոչ մեծ տարածք մի բլրի վրա: Այս իմաստով յուրաքանչյուր տապանաքարի գտնված տեղի նկարագրության վրա առանձին-առանձին կանգ չենք առնի:

18 Կազմող Խաչատուրը հայ քարագործ վարպետների շարքում նոր անուն է: Նրա կողմից գերեզմանոցում կերտված ու իր անունը արձանագրած յոթ տապանաքար է պահպանվել: Դրանցից 5-ը թվագրված՝ 1618, 1620 (երկու), 1651 և 1652 թվականներով:

14 Կազմող ՈՒՆԱՆԸ (Հունան) նույնպես նոր անուն է այդ շարքում: Պահպանվել են նրա կողմից կերտված 4 արձանագիր տապանաքար, որոնցից 3-ը թվագրված՝ 1650, 1652, 1653:

15 Մելիք Սուլթան Բաբի (բաբ=հայր) ինքնությունը մեզ չի հաջողվել պարզել: Ուշագրավ է, որ Մ. Բարխուդարյանցը գերեզմանոցում տեսել է ոմն Մելիք Զհանկիրի տապանաքարը և ենթադրել, որ Կոզենը նաև մելիքանիստ գյուղ էր («Արցախ», էջ 59: Տես նաև նույնի՝ Աղուանից Պատմութիւն, հտ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 57): Այդ տապանաքարը մենք տեղում չենք գտել, բայց մեր ներկայացրած ԺԲ և թերևս նաև ԺԴ արձանագրությունները երախտաշատ գիտնականի ենթադրության օգտին են խոսում: Ինչ վերաբերում է Թասուջին նոր տեղամասին, ապա սրա տեղադրությունը մեզ անհայտ է:

16 ԺԷԱ, էջ 868:

17 Նույն տեղում:



ՀԱՆԳԻՍՏ
Տ. ԱՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԲՈՅԱՋՅԱՆԻ
(1928—1988)

Ս. թ. նոյեմբերի 15-ին, վաթսուն տարեկան հասակում, ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց Մայր Աթոռի միաբան Տ. Արամ վարդապետ Հակոբի Բոյաջյանը:

Հանգուցյալ հայր սուրբը ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 30-ին Եգիպտոսի Կահիրե քաղաքում:

Կրթությունը ստացել է տեղի Գալստյան ազգային վարժարանում, որի միջնակարգ դասընթացը ավարտել է 1946 թ.:

Փոքր տարիքից հաճախել է տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

1947 թ. հայրենադարձվելով Մայր Հայաստան՝ մշտական բնակություն է հաստատել Լենինական քաղաքում:

1947—1955 թթ. աշխատել է Լենինականի տեքստիլ գործարանում, միաժամանակ որպես դպիր ծառայելով Լենինականի Ս. Յոթ վերք եկեղեցում: 1955 թ. ավարտելով տեքստիլի տեխնիկումի երկամյա դասընթացը, կարճ ժամանակ աշխատել է որպես ենթավարպետ:

1955 թ. հունիսի 26-ին, հիշյալ եկեղեցու հավատացյալների խնդրանքի և դիմումի համաձայն, ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ հանգուցյալ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի:

1957 և 1965 թթ. Վեհափառ Հայրապետի կողմից, բարեխիղճ ծառայության համար, Տ. Արամ քահանային շնորհվել է լանջախաչ և ծաղկյա փիլոն կրելու իրավունք:

1973 թ. Վեհափառ Հայրապետը տեր հորը շնորհել է ավագության պատիվ:

Հանգուցյալ Տ. Արամ քահանան Լենինականի Ս. Յոթ վերք եկեղեցում ծառայել է 26 տարի: Ծառայության զուգընթաց նա անձանձրույթ ղեկավարել է եկեղեցու քառաձայն երգչախումբը:

1981 թ. սկզբին, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և համաձայնությամբ, տեղափոխվել է Երևան և շարունակել իր ծառայությունը Երևանի Ս. Զորավոր եկեղեցում որպես ավագերեց և լուսարարապետ:

1986 թ. մարտի 8-ին հանգուցյալ տեր

հայրը կորցրեց երեցկնոջը՝ Արտաշուհուն:

1987 թ. փետրվարի 28-ին, համաձայնությամբ և օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի, Մայր տաճարի լուսարարապետ գեր. Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի ձեռքով ստացել է վեղար կրելու իրավունք և որպես կուսակրոն քահանա ընդգրկվել Մայր Աթոռի միաբանության շարքերը:

Վեհափառ Հայրապետը, նկատի առնելով նրա երկարամյա ծառայությունը Հայ Եկեղեցուն, շնորհել է լանջախաչ կրելու իրավունք:

1987 թ. ապրիլի 30-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրության համաձայն, ձեռամբ գեր. Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, Տ. Արամ աբեղա Բոյաջյանին շնորհվել է վարդապետական աստիճան:

Տ. Արամ վարդապետը վեղար ստանալու օրվանից վարել է Մայր տաճարի փոխլուսարարապետի պաշտոնը:

1988 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Տ. Արամ վարդապետը, Եգիպտոսի առաջնորդ գեր. Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի հրավերով մեկնել է Կահիրե՝ հովվական ծառայության: Առողջության վատացման պատճառով վերադարձել է Մայր Աթոռ:

Նոյեմբերի 16-ին հանգուցյալ Տ. Արամ վարդապետի աճյունը տեղափոխվել է Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցի:

Նոյեմբերի 17-ին մատուցված պատարագի ընթացքում կատարվեց հայր սուրբի վերջին օծման կարգը, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գեր. Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի: Նույն օրն իսկ հանգուցյալի աճյունը ամփոփվեց Երևանի Ծաղումյանի շրջանի գերեզմանոցում, երեցկնոջ կողքին:

Հանգուցյալը կարգապահ, ավանդապահ և բարեխիղճ հոգևորական էր: Ուր էլ որ նա ծառայել է, վայելել է համայնքի և իրեն ճանաչողների սերն ու հարգանքը:

Հանգիստ և խաղաղություն սիրելի հայր սուրբի հոգուն:

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՆՈՐԱՅՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ

1988 թվականի դեկտեմբերի 7-ին ողբերգական պայմաններում անավոր երկրաշարժի զոհ դարձավ Լենինականի Ս. Աստվածածին (Յոթվերք) եկեղեցու ավագ քահանա Տ. Նորայր Սարգսյանը:

Հանգուցյալ Տ. Նորայր ավագ քահանան ծնվել է 1924 թվականին Երևանում, բանվորի ընտանիքում:

Թերի միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Ստեփան Շահումյանի անվան դպրոցում:

1941—1943 թվականներին ծառայել է սովետական բանակում և անմիջական մասնակցություն ունեցել հայրենիքի համար պաշտպանության մարտերին, որի համար պարգևատրվել է մեդալներով և շքանշանով:

1945 թվականին Ս. Էջմիածնում վերաբացված հոգևոր ճեմարանի առաջին սաներից է:

1946—1948 թվականներին որպես դպիր ծառայել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցում:

1948 թվականին Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ձեռամբ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Թումանյանի, ձեռնադրվել է սարկավագ և ծառայել Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում:

1949 թվականին Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում, ձեռամբ նույնպես Տ. Կարապետ արքեպիսկոպոս Թումանյանի, ձեռնադրվել է քահանա և այնուհետև մինչև իր կյանքի վերջը ծառայել Հայ Եկեղեցուն՝ միշտ դրսևորելով իրեն որպես բարեհոգի և նվիրյալ տիպար հայ հոգևորական:

1971 թվականին, ի գնահատումն իր անբասիր և բոլորանվեր ծառայության, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով արժանապատիվ տեր հայրը արժանացել է ավագ քահանայության պատվի:

Հանգուցյալ Տ. Նորայր ավագ քահանայի դին Լենինականի վլատակների տակից հանվել և ամփոփվել է քաղաքային գերեզմանատանը:

Երկնային խաղաղություն տեր հոր հոգուն:



ՀԱՆԳԻՍՏ
Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ
(1926—1988)

Ս/թ. դեկտեմբերի 16-ին, վաթսուներկու տարեկան հասակում, վախճանվեց Տ. Գրիգոր քահանա Ծատուրյանը:

Հանգուցյալ Տեր Գրիգոր քահանան ծնվել է Իրանի Սպահանի շրջանի Հազարջրիք գյուղում, հողագործի ընտանիքում:

Կրթությունը ստացել է տեղի Մեսրոպյան դպրոցում:

Մինչև 1968 թ. զբաղվել է հողագործությամբ և եոեք տարի էլ ուսուցչական պարտականություն է կատարել:

Մանկությունից սիրել է եկեղեցին և մշտապես մասնակցել տեղի եկեղեցու արարողություններին:

1960 թ. ձեռնադրվել է սարկավագ:

1968 թ. ընտանյոք հայրենադարձվել է Մայր Հայաստան և մշտական բնակություն հաստատել Աշտարակ քաղաքում:

1971 թ. սեպտեմբերի 26-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ հանգուցյալ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանի, ձեռնադրվել է քահանա:

1971 թ. մինչև կյանքի վերջը ծառայել է Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում:

1983 թ. Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կոնդակով արժանացել է լանջախաչ կրելու, իսկ 1988 թ. հունվարին՝ ծաղկյա փիլոն կրելու իրավունքին:

Հանգուցյալը համեստ, հավատավոր, հարգված անձ էր:

Դեկտեմբերի 18-ին Աշտարակի Ս. Մարինե եկեղեցում մատուցված պատարագի ժամանակ կատարվեց հանգուցյալի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի:

Երկնային խաղաղություն տեր հոր հոգուն:

Մահվանից ուղիղ երկու օր առաջ հանգուցյալ քահանա հայրը կատարել է մարդասիրական մի գործ՝ երկրաշարժից տուժածների ֆոնդին մուծելով հինգ հազար (5000) ռուբլի:



ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՍԱՄՎԵԼ ՔԱՀԱՆԱ ՀԱՄԲԱՐՁՅԱՆԻ
(1908—1988)

Ս/թ. դեկտեմբերի 16-ին վախճանվեց արժանապատիվ Տ. Սամվել քահանա Համբարձյանը:

Հանգուցյալ տեր հայրը ծնվել է 1908 թ. Իրանի Սուլթանաբադի շրջանի Բուրգ գյուղում, Տ. Սմբատ քահանա՝ի ընտանիքում:

Կրթությունը ստացել է տեղի դպրոցում:

Մինչև 1946 թ. ծառայել է տեղի գյուղական դպրոցում որպես ուսուցիչ:

1946 թ. հայրենադարձվելով Մայր Հայրենիք, բնակություն է հաստատել Էջմիածնի շրջանի Երրորդ սովխոզում:

1947—1958 թթ. սովխոզում աշխատել է որպես հաշվապահ:

1959—1969 թթ. սովխոզում աշխատել է որպես խաղողագործության աշխատախմբի ղեկավար:

1969 թ. անցել է կենսաթոշակի:

Ամբողջ կյանքի ընթացքում կապված է եղել եկեղեցուն:

1971 թ. սեպտեմբերի 26-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, ձեռամբ հանգուցյալ Տ. Վահան եպիսկոպոս Տերյանի, ձեռնադրվել է քահանա:

1971—1988 թթ. ծառայել է Հոկտեմբերյանի շրջանի Նոր Արմավիր գյուղի Ս. Գավիթ եկեղեցում որպես ծիսակատար քահանա:

Դեկտեմբերի 17-ին, Ս. Հակոբ Մծբնա հայրապետի տոնի օրը, Մրգավանի Ս. Հակոբ եկեղեցում մատուցված պատարագին կատարվեց Տ. Սամվել քահանայի վերջին օծման կարգը՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գեր. Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի:

Հանգուցյալը համեստ կարողությամբ, պարտաճանաչ, համայնքի կողմից հարգված հոգևորական էր:

Թող Աստված երկնային խաղաղություն պարգևի հանգուցյալ տեր հոր հոգուն:

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ 1989 г.)

1. Год ненастий, год потрясений (редакционная)—(стр. 3—5).

2. Проповедь Его Святейшества Католикоса Вазгена I на Святое Рождество в кафедральном соборе св. Эчмиадзина, 6 января 1989 г. (стр. 6—8).

3. Слово Его Святейшества Католикоса Вазгена I по ереванскому телевидению, 9 декабря 1988 г. (стр. 9—10).

4. Слово Его Святейшества Католикоса Вазгена I в Кафедральном Соборе во время молебна в память жертв по случаю 40 дней со дня трагического землетрясения в Армении 7 декабря 1988 года, 15 января 1989 г. (стр. 11—14).

5. Поздравительные телеграммы и послания по случаю новогодних торжеств и праздника Святого Рождества между Его Святейшеством Верховным Патриархом и Католикосом Всех Армян Вазгеном I и главами сестер-Церквей (стр. 15—17).

6. Поздравительные послания Его Святейшества Католикоса Вазгена I трем преосвященным престолам, церковным епархиям и церковным общинам Армянской Апостольской Церкви по случаю Нового Года и Святого Рождества (стр. 18).

7. Иеромонах Абраам Мкртчян—Посещение Его Святейшеством Католикосом Вазгеном I районов, пострадавших от землетрясения, 26 января 1989 г. Слово Его Святейшества в Спитаке, Кировакане и Степанаване (стр. 19—27).

8. Информационное сообщение Канцелярии св. Эчмиадзина от 30 января 1989 года о помощи поступаемой на имя Католикосата из за рубежа и о ее распределении пострадавшим от землетрясения (стр. 28—29).

9. Сообщение Канцелярии от 30 января 1989 года о поступившей финансовой помощи св. Эчмиадзину из за рубежа (стр. 30).

10. Посещение св. Эчмиадзина главы Армянской Католической Церкви Католикосом-Патриархом Ованесом-Петросом XVIII с 29 декабря 1988 г. по 3 января 1989 года (стр. 31).

11. Церковная хроника, новости. О литургиях, проповедьях и других торжествах в Кафедральном Соборе в январе месяце 1989 года (стр. 32—33).

12. Проповедь преосвященного владыки епископа Авака Асатуряна, предводителя церковной епархии Армянской Апостольской Церкви Ирака, в Кафедральном Соборе, 29 января 1989 года (стр. 34—35).

13. Необычный, грустный Новый Год. Краткое описание предновогодного вечера 31 декабря. Отрывки из поэмы «Книги скорбей» св. Григора Нарекаци (стр. 36—40).

14. Епархиальная жизнь.

а) Священническая хиротония в Тбилиси в Армянской Церкви св. Георга, 17—18 декабря 1988 г. (стр. 41).

б) Священническая хиротония в армянской церковной епархии Ирака, 17—18 ноября 1988 г. Телеграмма Святейшего Католикоса Вазгена I предводителю армянской епархии Ирака епископу Аваку Асатуряну (стр. 42—44).

в) Визит митрополита Филарета предводительству армянской церковной епархии Дамаска, 14 ноября 1988 года (стр. 45—46).

15. Нерсес Ванакан—Вечному благодетелю (поэма)—(стр. 47—50).

16. Самвел Карапетян—Армянские историко-архитектурные памятники Таузского района Аз. ССР (исследование)—(стр. 51—55).

17. Кончина высокопреподобного архимандрита Арама Бояджяна (стр. 56—57).

18. Кончина высокопреподобного протоиерея Иорайра Саргсяна (стр. 58).

19. Кончина преподобного священника Григора Цатуряна (стр. 59).

20. Кончина преподобного священника Самвела Амбарджяна (стр. 60).

"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY 1989)

1. Year of agitation, year of earthquake (editorial)—(pp. 3—5).

2. The sermon of Holy Chrislmas of His Holiness Vasken I, the Catholicos of all Armenians, given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 6-th January 1989 (pp. 6—8).

3. The address of His Holiness from the TV of Yerevan, 9-th December 1988 (pp. 9—10).

4. The sermon of His Holiness given in the Holy Cathedral, on the occasion of the requiem consacrated for the victims of the earthquake, 15-th January 1989 (pp. 11—14).

5. The congratulatory cables and letters exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the sister churches, on the occasion of the New Year and Holy Christmas (pp. 15—17).

6. The congratulatory letter of His Holiness written to the three hierarchical sees of the Armenian Church, all diocesan prelates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (p. 18).

7. Reverend Abraham Mekertchian—The visit of His Holiness to the devastated regions of Armenia from the earthquake, 26-th January 1989. There are also the addresses of His Holiness given in Spitak, Kirovakan and Stepanavan (pp. 19—27).

8. Report of Mother See's Chancellory of 30-th January 1989 about the acquiring of thé merchandises sent from abroad to Holy Etchmiadzin and the distribution to the disastered people of the earthquake (pp. 28—29).

9. Communiqué of the Mother See's Chancellory of 30-th January 1989 about the financial help received from abroad and various organizations of different countries to the address of Holy Etchmiadzin (p. 30).

10. The visit of His Beatitude John-Peter XVII, the Catholicos-Patriarch of the Armenian Catholic Church, to the Holy See, from 29-th December 1988 until 3-rd January 1989 (p. 31).

11. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of the church festivities in the Holy See during the month of January 1989 (pp. 32—33).

12. The sermon in the Holy Cathedral of Bishop Avak Assadoorian, the prelate of Armenian diocese in Iraq, 29-th January 1989 (pp 34—35).

13. «Unusual sad New Year» (Brief description of the New Year evening 31st December 1988). There are also some parts of Grigor Narekatzi's poem «Book of lamentations» (pp. 36—40).

14. Diocesan news:

a) Sacerdotal ordination in the Armenian Church of St. George in Tbilisi, 17—18-th December 1988 (p. 41).

b) Sacerdotal ordination in the Armenian Church St. Gregory the Illuminator in Bagdad, 17—18-th November 1988. There is also the cable of His Holiness sent to Bishop Avak Assadoorian, the prelate of the Armenians of Iraq (pp. 42—44).

c) The visit of Metropolif Filaret to the residence of the prelate of Damascus Armenians, 14-th November 1988 (pp. 45—46).

15. Nerses Vanakan—«To the immortal holy man» (poem)—(pp. 47—50).

16. Samuel Karapetian—The Armenian architectural monuments in the region of Toyz (Azerbaidjan SSR)—(study)—(pp. 51—55).

17. Necrology of Reverend Aram Boyadjian (pp. 56—57).

18. Necrology of archpriest Norayr Sarkessian (p. 58).

19. Necrology of priest Grigor Dzadoorian (p. 59).

20. Necrology of priest Samuel Hambardjian (p. 60).



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER 1989)

1. Editorial: «Année d'agitation, année de tremblement de terre» (pp. 3—5).

2. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la naissance de notre Seigneur Jésus-Christ (pp. 6—8).

3. Discours de sa Sainteté prononcé le 9 décembre 1988 à la télévision d'Erévan (pp. 9—10).

4. Sermon de Sa Sainteté prononcé le 15 janvier 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine lors de la cérémonie de requiem consacrée aux victimes du tremblement de terre survenu en Arménie (pp. 11—14).

5. Echange de télégrammes et de lettres de felicitation entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pp. 15—17).

6. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (p. 18).

7. Père Abraham Mekertchian—Visite de Sa Sainteté dans les régions de l'Arménie dévastées par le tremblement de terre (26 janvier 1989). Allocutions que le chef de l'Eglise arménienne a prononcées à Spitak, à Kirovakan et à Stépanavan (pp. 19—27).

8. Rapport du 30 janvier 1989 de la Chancellerie du Saint-Siège concernant la réception des marchandises expédiées des pays étrangers à l'adresse du catholicossat de Saint-Etchmiadzine et leur distribution aux sinistrés du tremblement de terre (pp. 28—29).

9. Communiqué du 30 janvier 1989 de la Chancellerie du Saint-Siège concernant l'aide financière que le catholicossat de Saint-Etchmiadzine a reçue de diverses organisations des pays étrangers (p. 30).

10. Visite au Saint-Siège d'Etchmiadzine de Sa Béatitude Jean-Pierre XVII, catholicos-patriarche de l'Eglise arménienne catholique (du 29 décembre 1988 au 3 janvier 1989)—(31).

11. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de janvier 1989 (pp. 32—33).

12. Sermon de l'évêque Avak Assatourian, plélat du diocèse des Arméniens d'Iraq, prononcé le 29 janvier 1989 dans la cathédrale de Saint-Etchmiadzine (pp. 34—35).

13. «Une Nouvelle Année triste, inhabituelle» (description sommaire de la soirée du 31 décembre 1988 consacrée à la fête du Nouvel An). Reproduction de quelques extraits du «Livre des lamentations» de Grégoire de Narek (pp. 36—40).

14. Vie diocésaine:

a) Ordination de prêtre dans l'église arménienne St. Georges à Tbilissi (17—18 décembre 1988)— (p. 41).

b) Ordination de prêtre dans l'église arménienne St. Grégoire l'Illuminateur à Bagdad (17—18 novembre 1988). Suit le télégramme de Sa Sainteté Vasken Ier adressé à Mgr. Avak Assatourian, prélat des Arméniens d'Iraq (pp. 42—44).

c) Visite du métropolite Filaret à la résidence du prélat des Arméniens de Damas (14 novembre 1988)—(pp. 45—46).

15. Nersès Vanakan—«Au saint homme immortel» (poème)—(pp. 47—50).

16. Samuel Karapétian—«Les monuments architecturaux arméniens de la région de Toüze (RSS d'Azerbaïdjan)—(pp. 51—55).

17. Nécrologie du Père Aram Boyadjian (pp. 56—57).

18. Nécrologie de l'archiprêtre Noraïr Sarksian (p. 58).

19. Nécrologie du Père Grigor Tsatourian (p. 59).

20. Nécrologie du Père Samuel Hambardjian (p. 60).